2024, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (649)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային տոնի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Կանանց տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում բոլոր տիկնանց և օրիորդաց՝ ի Հայաստան և ի Սփյուռս:

Կնոջ դերը միշտ արժևորվել է մեր ժողովրդի կյանքում, հատկապես կարևորվել նրա առաքելությունն ընտանիքում զավակների դաստիարակության, սերունդների կրթության գործում: Այսօր, երբ ընդլայնվել են կանանց գործունեության ոլորտները, արդարև, մեծ է մեր մայրերի ու քույրերի ավանդը ազգային և եկեղեցական կյանքում:

Ներկայիս մեր հայրենիքն ու համայն հայությունը կանգնած են բարդ մարտահրավերների առջև: Դժվարին այս ժամանակներում առավել նվիրում ու խնամք է պահանջվում՝ հանուն ազգային-հոգևոր արժեքների զորացման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի համերաշխության ու միասնականության ամրապնդման և մեր երկրի խաղաղ ու բարօր գալիքի կերտման:

Մեծազնիվ տիկնայք և օրիորդներ, Իջման Սուրբ Սեղանի առջև հանապազ Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված Իր օրհնության ներքո պահպանի ձեզ հույսով ու հավատով առլեցուն, հաստատուն՝ բարի գործերի ու առաքինությունների մեջ, և քաջառողջ ու երջանիկ՝ ձեր ընտանիքների ու սիրելիների հետ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհները և ողորմությունը թող միշտ լինեն ձեզ հետ. ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
8 մարտի, 2024 թ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Փետրվարի 28-ին

«Որդիների կանչ» ՀԿ անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց զոհված հայորդիների ծնողներին ու հարազատներին միավորող «Որդիների կանչ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու մաղթանքները բերեց հայորդիներին՝ Սուրբ Էջմիածին այցի առիթով: Հայոց Հովվապետը կարևորեց կազմակերպության ներդրած ջանքերը՝ հանուն հայրենիքի իրենց կյանքն ընծայած հայորդիների ընտանիքների համախմբման և նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Հայոց Հայրապետը հաստատեց, որ զոհված սիրելիների ծանր կորստի ցավը կարելի է սփոփել՝ կարեկից և օգնական լինելով միմյանց, նաև կյանքի կոչելով նրանց նվիրական երազները: Նորին Սրբությունը հավաստեց, որ Հայոց Եկեղեցու հոգևոր սպասավորները պիտի շարունակեն առանձնակի հովվական խնամք և ուշադրություն ցուցաբերել նման ընտանիքներին՝ զորացնելու նրանց սրտերում հավատն ու լավատեսությունը ապագայի նկատմամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր իր գնահատանքը հայտնեց կազմակերպության անդամներին՝ ազգային արժեքների ամրապնդման, հայրենասիրական ոգով սերունդների դաստիարակության հարցերում դրսևորած նախանձախնդրության համար:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը նշեց, որ այս օրերին աշխարհասփյուռ հայ ժողովուրդն աղոթքով հիշում է 1988 թ. Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած սումգայիթյան ջարդերի անմեղ զոհերին՝ տեղեկացնելով, այս առավոտ Մայր Աթոռում, մասնակցությամբ ողջ միաբանության, կատարվել է հոգեհանգստյան կարգ:

Դատապարտությամբ անդրադառնալով Սումգայիթի հայ ազգաբնակչության զանգվածային ջարդերին և տասնյակ հազարավոր հայորդիների բռնի տեղահանությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ անպատժելի մնացած և համընդհանուր դատապարտման չարժանացած այս ողբերգությունը հետագայում տեղիք տվեց ադրբեջանական իշխանությունների հայատյաց քաղաքականության նոր ոճիրների՝ ռազմական ճանապարհով Արցախի զավթման, արցախահայության բռնի տեղահանման և հայկական հոգևոր-մշակութային ժառանգության ոչնչացման:

Անվտանգային առկա մարտահրավերների պայմաններում Վեհափառ Հայրապետը հրամայական նկատեց համազգային միաբանությունը, որով հնարավոր է կասեցնել նոր արհավիրքները, ապահովել խաղաղությունը հայրենի սահմաններում և հետամուտ լինել հայրենի հողի վրա Արցախի ժողովրդի անկախ ու անվտանգ կյանքի իրավունքի պաշտպանությանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին հայրենիքի առջև ծառացած խնդիրներին, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանությանը, ինչպես նաև Եկեղեցի—պետություն հարաբերություններին:

Փետրվարի 29-ին

Նիդեռլանդների Թագավորության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Նիդեռլանդների Թագավորության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Յապ Ֆրեդերիքսին:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով նորանշանակ ժամանակավոր հավատարմատարին, հաջողություններ մաղթեց նրան՝ Հայաստանում արդյունավոր առաքելության մեջ:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց երկու ժողովուրդների միջև պատմական կապերին՝ մասնավորապես ընդգծելով, որ Ամստերդամը եղել է հայ գրատպության նշանավոր կենտրոններից մեկը:

Խոսելով Նիդեռլանդների հայկական համայնքի գործունեության, ինչպես նաև Նիդեռլանդների Թագավորության եկեղեցիների հետ առկա գործակցության մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ նկատեց, որ տեղի հայ համայնքն ակտիվորեն ներգրավված է երկրի զարգացման գործընթացին:

Հայոց Հովվապետը, անդրադառնալով նաև Հայաստանի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, բռնի տեղահանված արցախահայերի ծանր կացությանը, իր երախտագիտությունը հայտնեց Նիդեռլանդների Թագավորությանը՝ այս դժվարին օրերին Հայաստանին և արցախահայությանը ցուցաբերած զորակցության համար:

Պրն. Յապ Ֆրեդերիքսը հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ Նիդեռլանդների իշխանությունները կշարունակեն իրենց աջակցությունը ցուցաբերել հայրենազրկված արցախահայությանը, ինչպես նաև ջանքեր կներդնեն Հայաստանի անվտանգային և հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրների դիմագրավման գործում:

Մարտի 1-ին

Եկեղեցասեր հայորդիների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հանրային կյանքի տարբեր ոլորտներ ներկայացնող մի խումբ եկեղեցասեր հայորդիների:

Ներկայացնելով խմբի անդամներին՝ Մայր Աթոռի իրավախորհրդատվական հանձնախմբի անդամ, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր տիար Արա Զոհրաբյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ եկեղեցասեր հավատացյալների խմբում ընդգրկված են տարբեր բնագավառներում ճանաչում և հարգանք վայելող անձինք, որոնց միավորում են հոգևոր, բարոյական արժեքները, Մայր Եկեղեցու նկատմամբ հավատարմությունը:

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով հայորդիներին, գնահատեց վերջիններիս ազգանվեր ու եկեղեցասեր ոգին և նախանձախնդրությունը քրիստոնեական սուրբ հավատքի ու ազգային նվիրական արժեքների նկատմամբ: Նորին Սրբությունը հաստատեց, որ Եկեղեցին, հակառակ ամեն տեսակի խոչընդոտների ու դժվարությունների, շարունակելու է անշեղորեն իրականացնել հոգեփրկչական ու ազգապահպան իր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում և ջանքեր գործադրել ի նպաստ բարոյական ու ազգային արժեհամակարգի անաղարտ պահպանման: ➥ էջ 2

Եկեղեցասեր հայորդիների

↩ էջ 1

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Մայր Աթոռի կողմից արցախահայությանը ցուցաբերվող աջակցության ծրագրերին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի և հայ ժողովրդի առջև ծառացած հիմնախնդիրներին, ինչպես նաև Հայ Եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը:

Մարտի 7-ին

Վաղարշապատ համայնքի ավագանու «Էջմիածին» խմբակցության անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վաղարշապատ համայնքի ավագանու «Էջմիածին» խմբակցության անդամներին՝ խմբակցության ղեկավար Սևակ Խաչատրյանի գլխավորությամբ: Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ խմբակցության անդամներն իրենց որդիական հավատարմությունն ու զորակցությունը հայտնեցին Մայր Եկեղեցուն և Սուրբ Էջմիածնի առաքելությանը:

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով ավագանու անդամներին, կարևորեց վերջիններիս բոլոր այն նախաձեռնությունները, որոնք ուղղված են Վաղարշապատ համայնքի բնականոն կենսագործունեության ապահովմանը և առկա խնդիրների լուծմանը: Հայոց Հովվապետը նաև գնահատանքով անդրադարձավ խմբակցության նախանձախնդրությանը՝ հանդեպ Մայր Եկեղեցին և հոգևոր ու ազգային նվիրական արժեքները:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի ու հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, ինչպես նաև՝ Հայ Եկեղեցու առաքելության առավել արդյունավորման խնդիրներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ Եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկումից հետո

1045 թվականին՝ Բագրատունիների հայկական թագավորության կործանումից հետո, հայ ժողովուրդը հայտնվեց բավականին ծանր վիճակում, քանի որ մի կողմից՝ հայությունը կորցրեց իր պետականությունը, իսկ մյուս կողմից էլ՝ առաջ եկավ սելջուկ-թուրքերի արշավանքների վտանգը: Բավական դժվար իրավիճակ ստեղծվեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու համար, քանի որ պետականության անկման պայմաններում կաթողիկոսարանը հայտնվել էր ծանր վիճակում: Նրա գործունեությունն ավելի տկարացավ այն ժամանակ, երբ տասնյակ հազարավոր հայեր սկսեցին թողնել պապենական հողերը և գաղթել օտար երկրներ՝ մասնավորապես հարևան Վրաստան, Բյուզանդական կայսրության տարածք և այլ վայրեր: Իր հերթին Բյուզանդական կայսրությունը, Հայոց Եկեղեցին դիտելով որպես հայկական թագավորության անկումից հետո հայ հոգևոր և քաղաքական ուժերը միավորող ամենահզոր կառույցը, հետևողականորեն փորձում էր վերջինիս իր ազդեցության տակ գցել: Միակ հնարը, որ տեսնում էր Բյուզանդական կայսրությունը վերոնշյալ հարցում, կաթողիկոսությունը հնազանդեցնելն էր ու Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռը ենթարկեցնելը: Քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հայոց հայրապետական աթոռն սկսում է դեգերել նախ Կապադովկիայի, իսկ հետագայում՝ նաև Կիլիկիայի տարածքներում:

Պահլավունիների տոհմի հաստատումը հայոց կաթողիկոսական աթոռին: Հայոց հայրապետական աթոռը Խաչիկ Բ (1058–1065) կաթողիկոսից հետո թափուր էր մնացել: Նշյալ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը փորձում էր ամեն կերպ խոչընդոտել նոր կաթողիկոսի ընտրությունները: Այդ խնդրի առնչությամբ գործնական քայլերի դիմեց Կարսի նախկին թագավոր Գագիկ Աբբասյանը, որի նախաձեռնությամբ էլ 1066 թ. կաթողիկոսության հարցը լուծվում է հետևյալ կերպ: Լեռնային Կիլիկիայի Ծամնդավ բերդաքաղաքում գումարվում է մի ժողով, որտեղ նոր կաթողիկոս է ընտրվում Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը (1066–1105), որն ստանում է Գրիգոր Բ Վկայասեր անունը և հիմնում Պահլավունիների կաթողիկոսական հարստությունը (1066–1203): Ընդհանրապես Վահրամ Պահլավունին բոլորի՝ թե՛ Բյուզանդական կայսրության և թե՛ դեռևս գոյություն ունեցող հայկական փոքր թագավորների համար հարմար թեկնածու էր: Եվ Պահլավունի հայրապետներն անջնջելի հետք թողեցին Կիլիկիայի հայոց պատմության մեջ:

Կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի աթոռակալությամբ հայոց կաթողիկոսների հաջորդականության մեջ տեղի ունեցավ մի էական փոփոխություն. կաթողիկոսական աթոռը համարվեց ժառանգական, և Պահլավունիները, որոնք իրենց Կամսարական ծագմամբ ներկայանում էին որպես հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ազգակիցներ, սկսեցին ժառանգական սկզբունքներով բազմել հայրապետական գահին, և այդ երևույթը շարունակվեց շուրջ մեկուկես դար: Գրիգոր Բ Վկայասերը մինչ հոգևորական դառնալը եղել է բյուզանդական պաշտոնյա՝ զբաղեցնելով Միջագետքի դքսի պաշտոնը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայմամբ՝ նա ժամանակին ամուսնացած է եղել, այնուհետև հեռացել է ընտանիքից և մտել վանականների կարգը՝ իրեն նվիրելով ուսման և աստվածային պատվիրանները սերտելուն: Նույն պատմիչի պնդմամբ՝ նա արդար ու առաքինի մարդ էր՝ քաջատեղյակ հռետորական արվեստին, լավ գիտակ Սուրբ Գրքի:

Հարց է առաջ գալիս, թե ինչու Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը Գագիկ Աբբասյանի օգնությամբ իր աթոռը հաստատեց Հայոց բնաշխարհից դուրս՝ Ծամնդավում: Պատճառն այն էր, որ այդ ժամանակ սելջուկ-թուրքերը, գրավելով մի շարք երկրներ, մտել էին նաև Հայաստան, և այնտեղ կաթողիկոսական աթոռի մնալը շատ վտանգավոր էր: Բացի այդ՝ Ծամնդավ տեղափոխելու հարցում շահագրգիռ էր նաև Բյուզանդական կայսրությունը:



Գրիգոր Բ Վկայասերը հեղինակ է գրական և վկայաբանական բազմաթիվ աշխատանքների, կատարել է թարգմանություններ: Հեղինակ է զանազան մեկնությունների: Կոստանդնուպոլսում հունարենից հայերեն է թարգմանել վարքագրական և հայրաբանական բազմաթիվ երկեր, այստեղից էլ՝ կաթողիկոսի Վկայասեր մականունը: Նրա կառավարման տարիներին սերտացել էին փոխհարաբերություններն Ասորի Հակոբիկյան, Հույն Ուղղափառ և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև: Իր կաթողիկոսության տարիներին ճանապարհորդություն կատարեց դեպի Եգիպտոս, Կ. Պոլիս և այլ վայրեր: Ուղևորության մեկնելուց առաջ Գրիգոր Վկայասերը տեղապահ է նշանակել:

Այսպես՝ այդ պատասխանատու պաշտոնին, հայոց կաթողիկոսի որոշմամբ, նշանակվեց իր քարտուղարը՝ վարդապետ Գևորգ Լոռեցին: Նա հայոց կաթողիկոսի դպրապետն էր և նրա մտերիմ գործակիցը: Հայոց հայրապետի ուղևորվելուց հետո Գևորգ Լոռեցին անկասկանդ վարում էր հայրապետության գործերը, սակայն վերջինիս գործունեության մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում առանձնակի հիշատակումներ չեն պահպանվել:

Ինչ վերաբերում է Գրիգոր Վկայասերի գործունեությանը, ապա պետք է նշել, որ վերջինս, ժամանելով Եգիպտոս, հիմնեց եպիսկոպոսական աթոռ և Գրիգոր Պահլավունի եպիսկոպոսին կարգեց Եգիպտահայոց առաջնորդ: Պատմիչ Սմբատ Սպարապետի վկայմամբ՝ նրան ընդունեց նույնիսկ Եգիպտոսի սուլթանը: Բացի այդ՝ Գրիգոր Բ Վկայասերը եղավ նաև Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում, որտեղ կայսրը և պատրիարքը նրան ընդունեցին մեծ պատվով և բոլոր պայմաններն ստեղծեցին վերջինիս գործունեության համար:

Երբ Գրիգոր Բ Վկայասերը վերադարձավ, գժտություն սկսվեց նրա և Գևորգ Լոռեցու միջև, որը փորձում էր զավթել հայոց հայրապետի աթոռը, սակայն Գրիգոր Վկայասերին հաջողվեց հեռացնել վերջինիս: Գևորգ Լոռեցու գործունեությունը հայոց մեծամեծների և իշխանների սրտով չէր եղել, ուստի և Գրիգոր Բ Վկայասերից առանձին ջանքեր չպահանջվեցին նրան պաշտոնազրկելու: Քանի որ Գևորգ Լոռեցին ընդամենը փոխանորդ էր, ապա եկեղեցական ժողով էլ չգումարվեց:

Կարևոր է նաև նշել, որ կաթողիկոսի վերադարձից հետո Ծամնդավի հայրապետանոցին սպառնում էր սելջուկ-թուրքերի կողմից գրավվելու վտանգը, և հավանաբար դա էր պատճառը, որ հայոց հայրապետը գերադասեց հեռանալ առավել անվտանգ վայր:

Հայոց Եկեղեցու պառակտումները: Բարսեղ Ա Անեցու ջանքերը հայրապետական աթոռի վերամիավորման հարցում: 11-րդ դարի երկրորդ կեսերին Փիլարտոս Վարաժնունին Կիլիկիայի տարածքի մի մասում ստեղծեց հայոց իշխանապետություն: Հայոց իշխանապետը, նպատակ ունենալով իր վերահսկողությունը հաստատելու Հայ Եկեղեցու նկատմամբ, հրավիրեց Գրիգոր Բ Վկայասերին իր իշխանության սահմանները, սակայն հայոց կաթողիկոսը մերժեց նրա հրավերը: Փիլարտոս Վարաժնունին իր երկրորդ նամակում կրկնեց հրավերը: Գրիգոր Բ Վկայասերը կրկին մերժեց նրան, սակայն առաջարկեց իր համաձայնությամբ հայրապետական աթոռը տալ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի քրոջ որդուն՝ Սարգսին՝ ուղարկելով Պետրոս կաթողիկոսի քողը, գավազանը և սուրբ խաչը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայմամբ՝ հայոց իշխանապետը համոզվելով, որ Գրիգոր Վկայասերը չի գա, հրաման արձակեց եկեղեցական ժողով գումարել Ջահան գավառի Հոնի կոչված քաղաքում, որտեղ ներկաները կաթողիկոս օծեցին վերոհիշյալ Սարգսին:

Հոնիում մոտավորապես 1076 թ. ստեղծվեց կաթողիկոսական մի նոր աթոռ, որը չի կարելի անվանել հակաթոռ, քանի որ եղել էր Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությունը: Նրա իշխանությունը տարածվում էր միայն Փիլարտոսի տիրույթների վրա: Որոշ ժամանակ անց՝ Սարգսի մահից հետո, Հոնիի հայրապետական աթոռին Փիլարտոսի կամքով բազմեց Թեոդորոսը: Շուտով երևան եկավ ևս երկու կաթողիկոսություն:

Այսպես՝ սելջուկ թուրքերը գրավեցին Փիլարտոսից Ջահան գավառը, և տեր Թեոդորոսը հայտնվեց նրանց տիրապետության տակ: Ստեղծված պայմաններում Փիլարտոսը տեր Թեոդորոսին հրավիրեց իր մոտ՝ Մարաշ, բայց վերջինս չկարողացավ գնալ: ➥ էջ 3

Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տեր Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի ծննդյան 105-ամյակի առիթով

Հայկական Երուսաղեմը մեր պապերից մեզ հասած ժառանգությունն է, որը պահպանվել է համազգային ճիգով, անայլայլ սիրով ու որպես լուսավոր փարոս մեր ժողովրդի հավատքի, կրոնական և ազգային ոգեկանության՝ պահ տրվել ներկա և գալիք սերունդներին: Դարերի ընթացքում, քաղաքական բարենպաստ պայմանների հետևանքով, Երուսաղեմն անցել է ձեռքից ձեռք, և շնորհիվ հայ պատրիարքների և Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց զինվորյալ միաբանության դիվանագիտական հեռատեսության՝ կարողացել են պահպանել հայկական կալվածքներն ու աստվածատուր սրբատեղիները: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Սուրբ Աթոռի բացառիկ հայրենասեր պատրիարքների շարքում անուրանալի է Թորգոմ արք. Մանուկյանի ծառայությունը, որն ուխտ է կապել հետևել մեր հավիտենական Տիրոջ պատվիրանին՝ ծառայելով Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հարազատ ժողովրդին ու հայրենիքին: Սրբազանի կյանքի պատմությունը մեր ազգի պատմությունն է՝ այրվող վշտերով, որոնումներով, ձեռքբերումներով: Դիլիջանցի Հովհաննեսի և վանեցի Նարգիզ Մանուկյանի 12-ամյա որդին, ավարտելով Բաղդադի հայոց Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ուսումը շարունակում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան-ընծայարանում: 1939 թ. ավարտելով Ընծայարանի լսարանական բաժինը, «Ամրացուր զիս, Տէր, որպէսզի Քո ձեռքի գործիքը դառնամ վասն շինութեան Սրբոյ Եկեղեցւոյս, Քո խօսքի աւետաբերն ըլլամ մեր հաւատացեալ եւ հուսեալ ժողովրդին մէջ ու նաեւ Քո խաղաղութեան ուխտեալ զինուորը դառնամ, որպէսզի մեր հայրենի օջախն այլևս չքանդուի, ու անոր երդիկի տակ միշտ առատ ու անսպառ ըլլան հացը, լոյսը...» աղոթքը շուրթերին, ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Նվիրյալ հոգևորականն աշխատանքի բացառիկ կորովով ստանձնում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան-ընծայարանի փոխտեսչի պաշտոնը: Երիտասարդ հոգևորականը քաջ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը կարող է ապրել և հարատևել իր հավատով, աշխատանքով և ազնիվ արարումով, ուստի ստանձնում է նաև Ս. Աթոռի տպարանի տեսչի, «Սիոն» ամսագրի խմբագրական մարմնի անդամի և Սրբոց Թարգմանչաց վարժարան-ընծայարանի ուսուցչի պաշտոնները: Մանուկյան եկեղեցականն իր սաներին փոխանցում է հույս, հավատ, քրիստոնեական առաքինություններ, հայկական ոգի, պապենական ավանդություններ, սեր մայր հայրենիքի նկատմամբ: Սրբազանը երբեք չի դժգոհել իր բազմապիսի աշխատանքով ծանրաբեռնվելուց, ուստի 1946 թ. Եղիշե պատրիարքի օրհնությամբ մեկնում է հոգևոր ծառայության ԱՄՆ, միաժամանակ հետևում է Տեմբլ համալսարանի դասընթացներին, գործուն և ղեկավար մասնակցություն բերում Հայ եկեղեցասիրաց երիտասարդական կազմակերպություններին:

1955 թ. վերադառնում է Երուսաղեմ: Ս. Աթոռում նրա բազմաբեղուն աշխատանքը՝ ժառանգավորաց վարժարան-ընծայարանի տեսուչ, դիվանապետ, միաբանական ժողովի ատենապետ, ընդհատվում է 1960 թ., մեկնում է ԱՄՆ, որտեղ ուսումը շարունակում է Քեմբրիջի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում: Բյուրեղային մաքրությամբ, բարետես արտաքինով, անսակարկ և բարեկիրթ լինելով՝ նվաճում է սրտեր, սեր և վստահություն, որն էլ նպաստում է, որ 1962 թ. ընտրվի Կալիֆոռնիայի թեմի թեմական առաջնորդ: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն, բարձր գնահատելով պատրաստված, հավատավոր հոգևորականին, ձեռնադրում է եպիսկոպոս: 1966 թ. նշանակվում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ: Սրբազանն Ամերիկայում իր գործունեության շուրջ 30 տարվա ընթացքում ներշնչված է եղել ավետարանական խորունկ զգացումներով և խոհերով, հորդորել է իր հոտի զավակներին ճշմարիտ մարդասիրություն, մարդկայնություն, անկաշառ և աննահանջ հայրենասիրություն, ազգասիրություն, հավատք դեպի ապագան, որն անշուշտ բխում է մեր ժողովրդի կենսահաստատ և հորդաբուխ սիրուց: Նրա հուզիչ և հոգի փոթորկող քարոզներում տիրական են հավատքի կրակը և մեր Եկեղեցուն ծառայելու ու նվիրվելու պատրաստակամությունը: Իր գործունեության ընթացքում նա մեծ ուշադրություն է դարձրել կրոնական, մշակութային ձեռքբերումներին, նոր սերնդի հայեցի դաստիարակության գործին: Ամերիկայում նա հնարավոր ամեն ինչ արեց, որ մեր եկեղեցու և ազգի զավակներից ոչ մեկը չկորսվի, չուծանա: Սրբազանն ընդունվեց, սիրվեց Ամերիկայում, նաև չմոռացվեց Երուսաղեմում, և 1990 թ. Աստծու և Սրբոց Հակոբյանց միաբանության կամքով Թորգոմ սրբազանն ընտրվում է Երուսաղեմի պատրիարք: Երուսաղեմում նա իր շուրջն է համախմբում ներշնչված, անձնվեր հոգևորականների, որպեսզի ամրացնի և կազմակերպի հոգևոր կյանքը: Սրբազան պատրիարքը Ս. Աթոռի զորացման և կազմակերպման աշխատանքներում մեծ հույսեր է կապում ժառանգավորաց վարժարան-ընծայարանի գոյության և նպատակների հետ, ուստի անդրադառնալով նրան վիճակված մեծ ու պատասխանատու դերին՝ պատրիարքի գիտակցությամբ և մանկավարժին հատուկ ջերմությամբ խոստովանել է. «Հայկական հոգածութեամբ պիտի յետեւենք մեր վարժարանի մակարդակի բարձրացման, որպէսզի ան առաւելագոյն չափով արդարացնի իր գոյութիւնը»: Այդ մտահոգությամբ նա ուսանողների և գիտություններին մեջ մարզված դասախոսների է հրավիրում Հայաստանից: Իսկ սաներին հայրաբար հորդորում է. «Ներքին հոգեկան հաւասարակշռութիւն, կարգապահութիւն, անշահախնդրութիւն, եղբայրութիւն եւ այս բոլոր առաքինութիւններուն թագն ու պսակը՝ մաքուր հաւատք, սէր եւ հաւատարմութիւն առ Աստուած եւ դէպի Եկեղեցին, մեր Ս. Էջմիածինը»:

Պատրիարք հոր գրական, ստեղծագործական բերքը ևս հարուստ է ու բազմաձավալ. բանաստեղծությունների գրքեր, արձակ էջեր, երաժշտագիտական հասուն ուսումնասիրություններ, աստվածաբանական, փիլիսոփայական և հոգեբանական թանձր վերլուծություններով հագեցած սրտաբուխ քարոզներ ու հմուտ թարգմանություններ համաշխարհային գրականության նմուշներից: Նրա բազմասեռ ու բազմաշնորհ ստեղծագործությունները հարստացնում և նոր շերտեր են բերում հայոց կրոնական, բանաստեղծական, երաժշտագիտական անդաստանում:

Թորգոմ պատրիարք հայրն Աստծու սիրելիներից է, քանզի նրան առատորեն տրվել են թե՛ եկեղեցական վարչական շնորհ և թե՛ ստեղծագործելու, արարելու տաղանդ: Նա իր կյանքի յուրաքանչյուր օրն ու տարին իմաստավորել է ու դարձրել արգասաբեր:

Դժվար է մեկ ակնարկի մեջ ներկայացնել Թորգոմ արք. Մանուկյանին, որն իր ամբողջ կյանքի գործերով ապրեց, քարոզեց ու գործեց «իբրեւ զկրտսէրն» եւ եղավ իբրև «զսպասաւորն» հայոց սրբակույս հավատքի բառ ու բանի: Վստահաբար կարող ենք ասել, որ սրբազանի կյանքը և քահանայական ծառայությունը ոսկի պարգև եղան մեր ժողովրդի համար, իսկ երախտագետ զավակներն էլ իրենց սրտերի ամեն մի լարից աղոթք են առաքում առ Բարձրյալը՝ պատրիարք հոր նման առաջնորդ ունենալու համար:

Պատահական չէ, որ մտավորական հոգևորականներից մեկը՝ տեր Ներսես քահանան, ասել է. «Թորգոմ պատրիարքը անշարժ կանգնած է նախնյաց սուրբ հավատքի վեմի վրա, հավաքել և մեկտեղել է բոլոր ուժերը և միության կենարար ոգով գոտեպնդված զորացնում, ծաղկեցնում է Հայոց Երուսաղեմը»: Իսկ սրբազանի սան Վիգեն եպիսկոպոս Այքազյանն իր հորդ զգացումներին այսպես է թև ու թռիչք տվել. «Սիրելի՜ սրբազան, թանկագի՜ն սրբազան, մեր՝ բոլորիս հայր սրբազան, քեզ արև օրեր և լույս հավիտյան Տիրոջ օրհնությամբ և սուրբ հավատքի անմահ զորությամբ»:

Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
գրող, հրապարակախոս

Հայ Եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկումից հետո

➥ էջ 2

Նման պայմաններում Փիլարտոսի և Թեոդորոսի հարաբերությունները խիստ սրվեցին, և հայոց իշխանապետը որոշեց իր տարածքների համար մի նոր կաթողիկոս հաստատել: Մարաշ քաղաքում հրավիրվեց եկեղեցականների ժողով, որտեղ, Մաթեոս Ուռհայեցու վկայմամբ, Վարագա Սուրբ Նշան վանքի վանահայր Պողոսին օծեցին կաթողիկոս:

Շատ չանցած՝ Մեծ Հայքում ծնվեց Անիի կաթողիկոսությունը վերականգնելու գաղափարը: Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեն, որ իր Բագրատունի ծագումը լավ էր հիշում, քաջալերեց անեցիներին այդ հարցում: Այն իրագործվեց 1081 թ., երբ Հաղպատի վանքում հրավիրված եկեղեցական ժողովում Անիի Բարսեղ եպիսկոպոսն Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի ձեռքով օծվեց կաթողիկոս: Բարսեղի ձեռնադրությունը դիտվում էր որպես Անիում կաթողիկոսական աթոռի նորոգում կամ վերահաստատում, որը երկար ժամանակով խափանվել էր բյուզանդացիների հակահայկական քաղաքականության հետևանքով: Բարսեղ Ա Անեցին կարողացավ 1090 թ. այցելել նաև Մելիք Շահին, բանակցեց վերջինիս հետ, և նրա խնդրանքով սուլթանը թեթևացրեց հարկերը: Մյուս կողմից՝ Հայոց Արևելից կողմերում էլ կաթողիկոսական իշխանությամբ էր օժտված Արցախի և Ուտիքի հոգևոր առաջնորդը: Նշված կաթողիկոսություններում, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, ինքնուրույն կերպով «առնէին ձեռնադրութիւնս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն»:

Այսպիսով՝ պատմական որոշակի հանգամանքներում առաջացան միաժամանակ մի քանի կաթողիկոսարաններ. Ծամնդավում (Գրիգոր Բ Վկայասեր), Հոնիում (Թեոդորոս), Մարաշում (Պողոս), Անիում (Բարսեղ Ա Անեցի): Սա, կարելի է ասել, աննախադեպ երևույթ էր Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ:

Շուտով Գրիգոր Վկայասերը հաստատվեց Շուղրի Կարմիր վանքում: Քիչ տեղեկություններ են հայտնի այս վայրում հայոց կաթողիկոսարանի գործունեության մասին: Հայտնի է նաև, որ Գրիգոր Բ Վկայասերը սերտացրել է հարաբերություններն արևելյան եկեղեցիների հետ:

1105 թ. Գրիգոր Բ Վկայասերը մահվան մահճում հայոց իշխանապետ Գող Վասիլի ներկայությամբ իր մոտ է հրավիրում քեռորդուն՝ Բարսեղ Ա Անեցուն և վերջինիս է հանձնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանը: Բացի այդ՝ Բարսեղ Ա Անեցին ստացավ Գրիգոր Բ Վկայասերի պատգամը, թե իրենից հետո ում պետք է կաթողիկոսական գահը փոխանցվի: Բարսեղ Անեցուց հետո այդ կարևոր պաշտոնը պետք է տրվեր Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռանը՝ Գրիգորին:

Վերլուծելով Գրիգոր Բ Վկայասերի գործունեությունը՝ Մ. Օրմանյանը նրան իրավամբ համարում է ամենագովելի դեմքերից մեկը Հայոց եկեղեցու պատմության մեջ:

Բարսեղ Ա Անեցին (1105–1113) թողեց Անին և հաստատվեց Գող Վասիլի տիրապետության տակ գտնվող Շուղրի Կարմիր վանքում: Նա հավատարիմ մնաց Գրիգոր Վկայասերի պատվիրաններին: Նորընծա կաթողիկոսը հոգ տարավ Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռներին: Նա Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռ Գրիգորին և նրա փոքր եղբորը՝ Ներսեսին, հանձնում է ուսուցչապետ Ստեփանոս Մանուկի դաստիարակությանը, որն այդ ժամանակ բավական հայտնի անձնավորություն էր: Նույն այս ժամանակաշրջանում հայոց հայրապետը պետք է լուծեր աթոռանիստ տեղի խնդիրը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ քաղաքական իշխանության կենտրոնը փոխադրվել էր Կիլիկյան Հայաստանի սահմանները, և այստեղ անհրաժեշտ էր նաև հոգևոր բարձր իշխանության ներկայությունը, հայոց հայրապետը որոշում է մնալ այնտեղ:

Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի կառավարման վերաբերյալ միջնադարյան սկզբնաղբյուրներում քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա զարգացրեց հոգևոր կյանքը և սերտ կապեր պահպանեց Գող Վասիլի հետ, որին Վարդան Արևելցին կոչում էր «Մեծ իշխանաց իշխան»: Ամեն պարագայում Բարսեղ Ա Անեցին իր աթոռակալման տարիներին վարեց բավական շրջահայաց քաղաքականություն՝ վերջ տալով կաթողիկոսական իշխանության տարանջատվածությանը և բացառելով առանձնացված հայրապետական աթոռների գոյությունը: Վերջինիս կառավարման տարիներին Կարմիր վանքի դպրոցը Կիլիկիայի բազմաթիվ վանքերի ու կրթօջախների մեջ հռչակված էր նշանավոր գիտնական վարդապետներով: Հատկապես աչքի էր ընկնում Ստեփանոս Մանուկը, և հենց նրա անվան հետ են կապված Կարմիր վանքում հռչակված բարձրագույն դպրոցի հեղինակությունը, հաջողությունները և մի շարք անվանի աշակերտների գործունեությունը: Վանքի դպրոցում ուսուցանում էին Սուրբ Գիրք, կրոնի և Եկեղեցու պատմություն, տոմարագիտություն, երաժշտություն, գրչության արվեստ և այլ առարկաներ:

Թեև Գրիգոր Վկայասերը կտակ էր թողել, որ Բարսեղ Անեցու մահից հետո հայրապետական աթոռը պետք է անցներ իր քրոջ թոռանը, այնուամենայնիվ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ դա տեղի կունենա Գրիգոր Գ Պահլավունու դեռահասության շրջանում:

Այսպես՝ Բարսեղ Ա Անեցուն չհաջողվեց երկար կառավարել: 1113 թ. դժբախտ մի դեպքի պատճառով կաթողիկոսը մահացու վնասվածք ստացավ և նույն թվականի մայիսի 26-ին մահացավ: Նրա վախճանը սգում էր ողջ ժողովուրդը: Մահվանից առաջ նա պատվիրեց իր մարմինը հողին հանձնել Քեսունի Կարմիր վանքում՝ քեռու կողքին: Բարսեղ Անեցին իր գիտակցական կյանքի ողջ ընթացքում ծավալեց հայանպաստ և ազգաշահ գործունեություն:

Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
պ. գ. թ., դոցենտ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Տաճարը և Անդաստանը

Աշխարհի տարածական նախօրինակն արտահայտվում է մի շարք գաղափարներով ու կերպարներով. տիեզերական սյուն, ծառ, լեռ՝ հայտնի թե՛ հնագույն, թե՛ ավելի զարգացած մշակույթներում (պալատ, տաճար և այլն): Տիեզերական ծառը, սյունը, լեռը կարող են լրացնել, կրկնապատկել կամ փոխարինել միմյանց: Աշխարհի նախանմուշը կարող է լինել ուղղահայաց կամ հորիզոնական, ինչպես և այդ երկուսի միացումով՝ եռաչափ-ամբողջական, օրինակ՝ քրիստոնեական տիեզերակառույցը:

Աշխարհի *ուղղահայաց* տիպարն արտահայտվում է վերից վար կամ վարից վեր՝ աշխարհի առանցքով: Այսպիսով աշխարհը բաժանվում է երեք մակարդակների՝ երկինք, երկիր և ստորերկրյայք, ընդ որում՝ միշտ չէ, որ այդ մասերն իրար հավասար են:

Աշխարհի *հորիզոնական* տիպարն արտահայտվում է առանցքի հանդեպ չորս ուղղություններով, որոնք համապատասխանում են աշխարհի չորս կողմերին, և որոնց միջև եղած անկյունները հավասար են իրար: Ավելի բարդանալով՝ աշխարհի ուղղահայաց և հորիզոնական երկու ավանդական տիպարները միանում են, առաջանում է աշխարհի *միասնական* տիպար. ստացվում է յոթ կետ:

Քրիստոնեության տարածումով սկիզբ է դրվում նոր աշխարհին, որը պետք է ունենար աշխարհընկալման սեփական տիեզերական նախօրինակ՝ կանոնակարգվելով աշխարհի առանցքի շուրջ: Այդ առանցքը Հիսուս Քրիստոսն է, իսկ Խաչը՝ տիեզերական (Կենաց) ծառը: Քրիստոնեության մեջ խաչն ու խաչելությունը հոմանիշներ են, ուստի խաչը խորհրդանշում է Քրիստոսին, Որի շուրջ համախմբվում է աշխարհը, և Որն ստեղծում է նոր կարգուկանոն: Քրիստոսին են ենթարկվում տիեզերքի բոլոր երեք ոլորտները. «Եւ ամենայն արարածք որ են յերկինս և յերկրի (տողատակ՝ բազումք՝ և ի ներքոյ երկրի, այսինքն՝ բազում Ավետարաններում ոլորտները չորսն են) և ի ծովու և որ ի նոսա՝ լուալ զի ասէին, Որ նստի յաթոռն և Գառնն՝ օրհնեալ, բարձրացեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից: Եւ չորք կենդանիքն ասէին, Ամէն. և երիցունքն անկանէին առաջի նորա և երկիր պագանեին» (Յայտն. Ե 13–14): Այդ նույն գաղափարն արտահայտում է նաև տաճարը՝ որպես շինություն և հավաքատեղի:

Քրիստոնեական տաճարի կենտրոնը զոհասեղանն է, որն էլ ուղղահայաց առանցքի կենտրոնն է: Համաձայն Ի. Իբրահիմովի՝ տաճարի խորհրդանշական կենտրոնով՝ զոհասեղանով է անցնում աշխարհի առանցքը: Այստեղ համընկնում են տիեզերքի մեծաշխարհն ու մարդու մանրաշխարհը: Տաճարն ուղղահայաց բաժանվում է երկու մասերի, որոնք հավասարազոր են երկնքին ու երկրին: Այդ մասերը կարող են բարդացվել մանրամասներով. երկրայինից երկինք տանող աստիճաններ, հիմքը որպես ստորերկրյայքի մաս և այլն: Գմբեթը հավասարազոր է երկնքին: Ըստ հեղինակի՝ քրիստոնյա տաճարի հիմնական միտումն է լինել երկրի ու երկնքի հանդիպման վայր, այսինքն՝ անցումային ճանապարհ մարդկայինից դեպի աստվածայինը:

Տաճարը կառուցվում է ըստ երկնային, աստվածային նախանմուշի: «Դու ասացիր, որ ես տաճար շինեմ քո սուրբ լերան վրայ եւ զոհասեղան՝ քո բնակութեան քաղաքում, քո այն սուրբ խորանի նմանութեամբ, որ սկզբից եւեթ, նախապէս, ինքդ պատրաստեցիր» (Իմաստութիւն Սողոմոնի, Թ. 8): Հիսուս ասում է Պետրոսին, որ էր Սիմոն. «Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԶ 18–19): Այսինքն՝ Պետրոսը Եկեղեցու հիմքն է, վեմ-քարը, որ դրվում է դժոխքի վրա, և փականն ու կապն է երկնքի ու երկրի:

Եկեղեցու էական պայմաններից է հիմնովին օծված լինելը: Եկեղեցաշինության մեջ 16 օծված հիմնաքարերից 12-ն առաքյալների անունով են, և 4-ը՝ ավետարանիչների, բայց առաքյալներից երկուսը՝ Հովհաննեսն ու Մատթեոսը, նաև ավետարանիչներ են, ուստի Պողոս առաքյալն ու Գրիգոր Լուսավորիչը դիտվում են որպես 15-րդ և 16-րդ առաքյալներ: 16 սյուներից 4-ը եկեղեցու 4 անկյուններն են՝ այդ անկյան քարերի մեջտեղում, 3-ը եկեղեցու երկայնքով և 2-ը լայնքով են զետեղվում, իսկ 2-ն էլ՝ աջակողմյան անկյուններում: Խորանի անկյուններում էլ դրվում են մնացած 4 սյուները:

Հայկական եկեղեցիները համապատասխանեցված են աշխարհի նախօրինակի չորս կողմերին: Գլխավոր դուռը, որ գտնվում է արևմուտքում, կոչվում է Ավագ դուռ: Եկեղեցին ուղղված է արևմուտքից արևելք, ուր և գտնվում են Ավագ խորանն ու բեմը: Սակայն եկեղեցու ներսում ուղղվածությունն արևելքից արևմուտք է, քանի որ երեսով դեպի ժողովուրդը դարձած սեղանը դիտվում է որպես անձ, և նրա աջ ու ձախ կողմերով որոշվում են աշխարհի կողմերը: Համապատասխանաբար՝ հյուսիսն Ավագ խորանի աջ կողմում է, հարավը՝ ձախ: Ստացվում է յուրահատուկ շրջան՝ արտաքինի և ներքինի համադրությամբ: Եկեղեցու արևելյան կողմում գտնվում է բեմը, որի վրա Սուրբ Խորանն է՝ իր Սուրբ Սեղանով, բեմը երկու կողմից ունի 3–7 ոտք աստիճան (անշուշտ, կան նաև բացառություններ, երբ աստիճանները գտնվում են Խորանի կենտրոնում, օրինակ՝ Ծաղկաձորի Կեչառիսի եկեղեցին): Աստիճանները երբեմն արևմուտք-արևելք, երբեմն հարավ-հյուսիս կամ հյուսիս-հարավ են ուղղված, կամ շարժունակության տեսանկյունից՝ պտույտով միաժամանակ երկու ուղղություն են կազմում: Հայկական շատ եկեղեցիներ կենտրոնում չորս սյուների վրա գմբեթ ունեն: Հին եկեղեցիներում այդ տեսակի գմբեթը կոչվում է կաթողիկե և խորհրդանշում է երկինքը:

Ինչպես նշվեց, տիեզերակառույցի առանցքն անցնում է Սուրբ Սեղանով: Սեղանը տափարակ, խաչաձև քարե շինվածք է՝ խորանի մեջտեղում կանգնած քարե սյան վրա, և օծված է 12 տեղով: Գլխավոր օծումը մեջտեղում է, որ կոչվում է «սեղանի գագաթ», և 7 աստիճաններով օրհնված է: Խորանը սեղանի հետևի մասն է, կամարածածկ, վրանաձև տեղ է՝ պարփակված չորս սյուներով, որոնք ավետարանիչներին են նվիրված: Ստացվում է, որ բեմը, խորանն ու սեղանը ևս ընկալվում են որպես տիեզերքի նախանմուշ՝ ուղղաձիգ և հորիզոնական տեղորոշիչ յոթ կետերով:

Շատ հետաքրքրական է, որ ժողովրդական բանահյուսության մեջ ևս արտահայտվել են աշխարհի չորս կողմերի հանդեպ եկեղեցու ներքին ուղղվածությունն ու խորհրդաբանությունը: «Որ որովհետև մեզ մոտ երկրում, երբ արևը մայրն է մտնում, հոն, երկնքում, արևածագ է, հետևաբար, Աստված, բազմած ոսկե գահին, դիմավորում է արևածագը: Այդ դիրքում աջակողմը գտնվում է հյուսիսային, ձախակողմը՝ հարավային, ճակատը ընկնում է՝ երկնքում թեև արևածագին, բայց երկրում արևմուտքում, իսկ թիկունքը՝ երկրի դիտումով՝ արևելեն»: Ակնհայտ է, որ ժողովրդական բանահյուսության մեջ ևս Աստծու հավիտենական գահը երկնքում գտնվում է նույն տարածաչափական դիրքում, ինչպես Ավագ խորանը եկեղեցում, և ինչպես եկեղեցում բեմի, այնպես էլ երկնքում Աստծու գահի համեմատ դիտարկվում են աշխարհի չորս կողմերը:

Հայկական «Ահեղ դատաստան» և «Ամենակալ» մանրանկարներում Քրիստոս պատկերվում է շրջապատված խաչաձև (Խ-ձև) դասավորված չորս ավետարանիչների խորհրդանշաններով. Մարկոս-առյուծ, Մատթեոս-հրեշտակ (մարդ), Ղուկաս-ցուլ և Հովհաննես-արծիվ: Հիմնականում օգտագործվում է խորհրդանշանների դասավորությունը՝ ըստ Եզեկիելի տեսիլքի (Եզեկ. Ա 10, աջ կողմում մարդ, առյուծ, ձախ կողմում՝ եզ, արծիվ), շատ ավելի հազվադեպ՝ համաձայն Հովհաննու Հայտնության (Հայտն. Դ 7–8, առյուծ, եզ, արծիվ, մարդ): Մանրանկարներում ավետարանիչների խորհրդանշանները դասավորված են (դիմացից). աջ կողմում՝ արծիվն ու ցուլը, ձախ կողմում՝ հրեշտակն ու առյուծը, իսկ եթե դիտարկենք նկարը «ներսից», այսինքն՝ մեջտեղում նստած Քրիստոսի համեմատ դիտված կողմերով, ապա կստացվի դասավորություն՝ ըստ Եզեկիելի:

Ինչպես ասացինք, Ավագ խորանի չորս սյուները նվիրված են չորս ավետարանիչներին: Երկուսը հետևի, այսինքն՝ արևելյան պատի մեջ. Հովհաննեսը՝ հյուսիսային, Մատթեոսը՝ հարավային կողմում: Մյուս երկուսը՝ խորանի «բերանում». Ղուկասը՝ հյուսիսակողմում, Մարկոսը՝ հարավակողմում: Թեև եկեղեցու ներսում կողմերը դիտվում են ըստ զոհասեղանի, սակայն աշխարհի կողմերը չեն կարող փոխվել, փոխվում են միայն աջն ու ձախը: Համապատասխանաբար դիմացից՝ արևմուտքից, հյուսիսը կլինի ձախ, իսկ հարավը՝ աջ, զոհասեղանից՝ արևելքից, հյուսիսը կլինի աջ, իսկ հարավը՝ ձախ: Եթե խորանի չորս սյուները, որոնք համապատասխանաբար խորհրդանշում են չորս ավետարանիչներին, փոխարինենք նրանց կենդանի-խորհրդանշաններով, ապա կստանանք խորանի հետևում Հովհաննես-արծիվ՝ հյուսիսում, և Մատթեոս-հրեշտակ՝ հարավում, Ղուկաս-եզ՝ հյուսիսում, և Մարկոս-առյուծ՝ հարավում, կամ ըստ զահասեղանի՝ աջ կողմում Հովհաննես-արծիվ և Ղուկաս-եզ, ձախ կողմում՝ Մատթեոս-հրեշտակ և Մարկոս-առյուծ: Եթե այս դասավորությունը համեմատենք մանրանկարների հետ և փոխենք համապատասխան աջի ու ձախի տեղերը, ապա կստանանք մանրանկարների խաչաձև (Խ-ձև) դասավորություն Հիսուսի կողմերով՝ ձախ կողմում արծիվն ու եզը (Հովհաննեսն ու Ղուկասը), իսկ աջ կողմում՝ մարդն ու առյուծը (Մատթեոսն ու Մարկոսը): Քանի որ աշխարհի չորս կողմերը տրված են հորիզոնական, ապա Ավագ Խորանի հետևի երկու սյուներն արևելքն ու հյուսիսն են, իսկ դիմացի երկու սյուները՝ արևմուտքն ու հարավը: Խ-ձևը հատվելով՝ արևելքը նշանակվում է Հովհաննես-արծիվով, արևմուտքը՝ Ղուկաս-եզով, հյուսիսը՝ Մատթեոս-հրեշտակով, և հարավը՝ Մարկոս-առյուծով:

Եթե Ավագ Խորանի զոհասեղանն ու խաչը Քրիստոսն է, իսկ քրիստոնեական տաճարի առանցքն անցնում է զոհասեղանով, ապա Քրիստոս տիեզերքի ուղղահայաց առանցքն է, իսկ չորս ավետարանիչները տիեզերքի չորս կողմ-սյուներն են՝ տրված հորիզոնական կտրվածքով, և իրենց ներսում ամփոփում են ամբողջ տիեզերքը: Այսպիսով՝ Քրիստոս ուղղահայաց կանգնեցված հավասարաթև խաչն է, իսկ չորս ավետարանիչները Խ-ձևի խաչ են կազմում Նրա շուրջը՝ հորիզոնական, այսինքն՝ ստացվում է սեռակնաձև, այսպես կոչված, «հայկական» խաչ:

Հետաքրքիր է, որ ժողովրդի մեջ նույնպես արտահայտվել է տիեզերակառույցի այս գաղափարը: Այսպես՝ Վանի գյուղերում փեսայի համար պատրաստում էին խաչաձև պսակ-ուրցը՝ երկու փայտիկներ իրար միացրած և կենտրոնում բամբակ (սպիտակ) դրած, իսկ վրան և չորս թևերին՝ կանաչ ու կարմիր բրդյա կտորներ: Այդ պսակը երգով գովելիս այսպիսի գովք էին ասում.

որպես տիեզերքի նախօրինակ

Չորս պսակ չորս
կենդանակերպն է,
Գլխու պսակ խաչափայտն է,
Այս թագին ինչ կու պէտէր,
որ թագին շուռ գար,
Սուրբ Աղօթարան զայս թագ
օրհնէր, որ թագին (շուռ գար):

Իրականում Խաչի թևերը պսակող կամ Քրիստոսի շուրջ պատկերվող չորս ավետարանիչների խորհրդանիշ-կերպարները քրիստոնեության որդեգրած հնագույն առաջավորարևելյան մի ավանդույթ են: Այսպես՝ Թոփրակ-կալեում հայտնաբերվել են արձանիկներ, որոնք հորինված են առյուծի, արծվի, ցլի և մարդու մարմնի մասերի համակցությամբ և զարդարել ու պահպանել են գահի չորս կողմը, այսինքն՝ տիեզերքի առանցքն անցել է գահով, իսկ թագավորը կամ գերագույն աստվածը (Խալդին) ընկալվել է նաև որպես տիեզերքի պահապան: Նման ավանդույթ կար և չինական աշխարհակառույցի մեջ: Աշխարհի կողմերի պահապան ոգիները նկարվում կամ քանդակվում են անկյուններում, վերևում՝ աջից՝ Կանաչ վիշապ-արևելք, ձախից՝ Սպիտակ վագր-արևմուտք, ներքևում՝ աջից՝ Կարմիր թռչուն-հարավ, և ձախից՝ Սև զինվոր-հյուսիս, որը պատկերվում է որպես կրիային փաթաթված օձ, խորհրդանշում է երկնքի և երկրի ամուսնությունը, իսկ տիեզերքի առանցքը տիեզերական ծառն է:

Հատկանշական է, որ Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Հարության տոնին՝ առավոտյան՝ Անդաստանից առաջ, կատարում է աշխարհի չորս կողմերի առանձին օրհնություն: Երգվում են պատշաճ շարականներ, և ընթերցվում Ավետարաններին համապատասխան հատվածներ՝ ուղղված աշխարհի տվյալ կողմին: Դեպի արևելք՝ «Ընդ լուսանալ» (շարական), Ավետարան ըստ Հովհաննու ԺԹ 38–42, դեպի արևմուտք՝ «Առաքեցար ի Հօրէ» (շարական), Ավետարան ըստ Ղուկասի ԻԳ 50–56, դեպի հարավ՝ «Ի գերեզման Քո» (շարական), Ավետարան ըստ Մարկոսի ԺԵ 42–47, դեպի հյուսիս՝ «Քո յարութեանդ» (շարական), Ավետարան ըստ Մատթեոսի ԻԷ 57–66: Ավետարանների բոլոր չորս հատվածներն էլ պարունակում են միևնույն դրվագը՝ Քրիստոսի իջեցումը խաչից և ամփոփումը անձավում: Հետաքրքիր է, որ այս դեպքում աշխարհի կողմերն օրհնվում են չորս Ավետարանների հակառակ դասավորությամբ. Ավետարան ըստ Հովհաննու, ըստ Ղուկասի, ըստ Մարկոսի և ըստ Մատթեոսի, մինչդեռ ավետարանիչները դասավորված են նույնպես համաձայն Եզեկիելի տեսիլքի՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես:

Պետք է նշել, որ աշխարհի կողմերը խորհրդանշող ավետարանիչները դասավորված են հորիզոնական երկու զուգահեռ գծով, և անցումը կատարվում է ոչ թե շրջանաձև՝ ժամացույցի սլաքին համապատասխան՝ արևելք, հարավ, արևմուտք և հյուսիս, այլ զուգահեռ գծերով՝ արևմուտք-արևելք, հարավ-հյուսիս: Այդ զուգահեռությունն ապահովում է քառակուսու առկայությունը, այսինքն՝ աշխարհի չորս կողմերը տրված են ոչ թե շրջանով, այլ քառակուսիով, ավելի ճիշտ՝ քառակուսին ներառված է շրջանի մեջ, քառակուսին էլ իր հերթին արտահայտվում է խաչով, սակայն ավելի շուտ ոչ թե հավասարաթև, այլ X-ձև՝ հորիզոնական: «Եւ քառակուսին զխաչն նշանակէ, ըստ որում պարգևեցան ի վեր զչորս կողմն աշխարհի, դարձեալ զի և չորիւք առաքինութեամբ նուիրեմք զպատարագն, չորիւք մասամբ տարակն հիւթոց սրբութեամբ ընծայեմք զմեզ»:

Խաչն առհասարակ ամբողջականության, քառորդության, այսինքն՝ չորսը մեկի մեջ գաղափարի նախատիպային առավել հայտնի պատկերն է: Այդ իսկ պատճառով կապված է քառորդության այլ դրսևորումների հետ. աշխարհի չորս կողմ (նույնն է՝ չորս հողմ), տարվա չորս եղանակ, չորս հիմնարար տարր և այլն:

Եզնիկ Կողբացին, խոսելով չորս տարերքի մասին՝ ըստ հիմնական հատկությունների, համադրում է դրանք աշխարհի չորս կողմանկյուններին. «Եվ ահա տեսնում ենք այս աշխարհն ինչպես մի կառք՝ լծված չորս երիվարով՝ տաքությամբ, ցրտությամբ, չորությամբ ու խոնավությամբ: Եվ կա կառավարող մի գաղտնի զորություն, որն այդ չորս հակառակորդները, հաշտ ու խաղաղ պահելով, ենթարկում է իրեն: Այդ կառքը բոլոր ուղղություններով է ընթանում: Երբ դեպի արևելք է ընթանում, որևէ արգելք չկա, որ դեպի արևմուտք արշավի, և երբ դեպի հյուսիս է սլանում, որևէ արգելք չկա, որ դեպի հարավ սլանա, որովհետև կառավարողի ձեռքը ունակ է դեպի ամեն կողմ ուղղելու և տիեզերքի չորս անկյուններն արշավել տալու»: Եզնիկ Կողբացին տիեզերքը ներկայացնում է որպես տուն, ուր առաստաղը երկինքն է, հատակը՝ երկիրը, դրանց միջև վառվող ճրագն արեգակն է, իսկ տան չորս անկյուններն աշխարհի չորս կողմերն են:



Անդաստանի ծեսը նույնպես կատարվում է շրջան-քառակուսիով, աշխարհի կողմերը տրվում են հորիզոնական, սակայն այս դեպքում արդեն ոչ թե X, այլ հավասարաթև խաչի ձևով. սկզբում արևմուտք-արևելք, հետո արևելք-արևմուտք, մեկ քառորդ վերադարձ և հյուսիս-հարավ, հետո՝ հարավ-հյուսիս: Այսպիսով երկու շրջան է գծվում՝ մեջը քառակուսի, որում ամփոփվում է խաչը՝ ծայրերին ունենալով աշխարհի յուրաքանչյուր կողմը:

Յուրաքանչյուր Անդաստանի ընթացքում «վերարտադրվում է» տաճարի ներքին կառուցվածքը՝ տիեզերակառույցը, այսինքն՝ Անդաստանի ծեսով ամեն անգամ վերահաստատվում է տիեզերքի նախօրինակը, կրկնվում է տիեզերքի արարումը: Կարող ենք փաստել, որ տիեզերակառույցի վերահաստատումն Անդաստանի ծեսի կարևոր գործառույթն է, և այս դեպքում Անդաստանը կատարվում է եկեղեցու մեջ կամ շուրջ:

Սակայն Անդաստանի ծեսն ունի նաև երկրորդ գործառույթը, որը վերականգնում է ինչ-ինչ պատճառներով խաթարված տիեզերակառույցը: Այս դեպքում Անդաստան է իրականացվում դաշտերում և այգիներում: Հ. Աճառյանն «անդաստան»-ը մեկնում է որպես «անդ-հանդ» (յանդ) արմատից և «աստան» ածանցից առաջացած բառ (օր. Հայ+աստան, Հնդկ+աստան և այլն): «Անդ» արմատն ունի նաև «տուն» իմաստը, քանի որ հին նահապետական կյանքում տունն ու արտը անբաժան էին իրարից:

Գ. Հակոբյանն Անդաստանը նկարագրում է որպես շուրջպար. «Մասնակցում են դպիրներն ու սարկավագները, աջակողմյան և ձախակողմյան բոլոր տիրացուները, կերոն բռնող բոլոր պատանիները և ինքը՝ քահանան՝ պարի մեջտեղում: Անդաստան եկեղեցական պարը կատարվում է եկեղեցում, նրա շուրջը, *երաշտի տարիներին ամռանը՝ գյուղի հանդերում, որ այդ պարի ու երգի զորությամբ անձրև գա*»: Երաշտն առաջանում է տիեզերքի խաթարման դեպքում և վնասում է պտղաբերությանը, ուստի Անդաստանի ծեսի կատարումով անձրև է ապահովվում, և վերանորոգվում է տիեզերքը:

Վ. Տեր-Մինասյանը նկարագրում է Խաղողօրհնեքին ու Ճրագաքաղին կատարվող Անդաստանը: Շողակաթի ցերեկը հավաքվում էին, գալիս էր շուրջառազգեստ քահանան՝ աջ ձեռքում մկրատ, իսկ ձախում խաչը բռնած: Վառած մոմակալներով ու կանթեղներով տիրացուները երգում են «Արևելք գերարփին եւ օթարան լուսածին» շարականը և գնում են դրախտը, եթե վանք ունեն: Եթե չունեն, գյուղի կամ քաղաքի երեցփոխանի այգին են գնում, ուր ճշտորեն կատարում են Անդաստանի արարողությունը: Անդաստանն ավարտելուց հետո դպրապետն ուժեղ ձայնում է. «Օրհնեա, Տէր»: Ժամարարը ձայնում է. «Օրհնեսցի ողկույզ... Այգւոյս այս նշանաւ սուրբ Խաչւոյս եւ սուրբ Աւետարանաւս և աւուրս շնորհիւ», հետո ժամարարը վերցնում է մկրատ կամ դանակ և կտրելով մի ողկույզ ու ցույց տալով ժողովրդին՝ բարեմաղթում է. «Երկնքի լոյս Թուխ մանուկներէն ցողուած են այս մեր այգիներու ողկոյզները. Աստուած օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Քրիստոսի սուրբ խաչով, Աստուածածնի արցունքով, Լուսավորչի լոյս հաւատքով. Հաց ու գինի Տէր կենդանի Թէ մեր այգիներն ալ պիտի ըլլան միշտ դալար, եւ ողկույզներն ըլլան միշտ անսպառ»:

Այսինքն՝ Անդաստանից հետո վերահաստատվում էր տիեզերքը, կրկնվում էր արարչագործությունը. երկնքի լույս, սուրբ նահատակ Թուխ Մանուկները ջրել են ողկույզները, իսկ Աստված կրկին անգամ օրհնում և պահպանում է բերքը քրիստոնեական սրբերով և զորություններով՝ Նոյի տապանով, Քրիստոսի սուրբ Խաչով, Ս. Աստվածածնի արցունքով և Լուսավորչի լույս հավատով՝ քրիստոնեությամբ, որպեսզի այգիները միշտ պտուղ տան:

Հավանական է, որ Անդաստանի ծեսը մեզ է հասել նախաքրիստոնեական ժամանակներից: Այդ են վկայում Անդաստանի ծեսի կատարման ժամկետները: Տարվա Անդաստանի առաջին ծեսը կատարվում էր Տրնդեզի օրը, երբ կիսվում էր ձմեռը, և կատարվում էին ցանքսի, հացահատիկի պահպանման ծեսերը: Տրնդեզի խարույկի ծխի ուղղությունը ցույց էր տալիս, թե որ հողերն են այդ տարի առատ բերք տալու, մոխիրը այդ նույն նպատակով շաղ էին տալիս հանդերում և այգիներում:

Այսինքն՝ Տրնդեզը նախապատրաստում էր երկրագործական տարվա սկիզբը, ուստիև առաջին Անդաստանն էլ կատարվում էր Տրնդեզին: Այդ օրը համարվում էր «օր իջանելոյ արևու ի հողս», ուրեմն և ծիսական խարույկը կոչված էր նպաստելու այդ տիեզերական երևույթին: Հնարավոր է, որ Անդաստանն էլ ավելի էր հզորացնում կրակի ու հողի միացման զորությունը:

Այնուհետև Անդաստան է կատարվում երկրագործության համար կարևորագույն համարվող Ծաղկազարդին, երբ ծաղկում են առաջին ծառերը, Ս. Զատիկին, երբ բնությունն արդեն արթնացել է, հետո՝ ամեն կիրակի, մինչդեռ կատարվում են Խամահանեքը, վարը և ցանքսը, մինչև Համբարձում, երբ գագաթնակետին է հասնում բնության զարթոնքը, հասունանում են առաջին պտուղները, ծաղկում է խաղողը, և խոտ-հունձքի շրջանն է: Հետո ամեն կիրակի՝ մինչև Վարդավառ, երբ երաշտների վտանգը մեծ էր, և հանդերը կարող էին չորանալ, Խաղողօրհնեքին, երբ հասնում էր բերքը, մասնավորապես՝ խաղողը: Անդաստանի տարվա վերջին արարողությունը կատարվում է Խաչվերացին, երբ կատարվում է աշնանացանը, և ավարտվում է երկրագործական տարին: Խաչվերացից մինչև Տրնդեզ Անդաստան չի կատարվում: Տոների մեջ, որոնց ընթացքում Անդաստան է կատարվում, բացակայում է տաղավար առաջին տոնը՝ Քրիստոսի Ս. Ծնունդը, որ շատ մեծ նշանակություն ունի քրիստոնեության համար: Սակայն այն տոնվում է խոր ձմռանը, երբ երկրագործական աշխատանքներ չեն կատարվում:

Բուն հայկական հեթանոսական ծես լինելու հավանականության մասին է խոսում նաև այն փաստը, որ Անդաստանը բնորոշ է միայն Հայ Առաքելական Եկեղեցուն, իսկ քանի որ քրիստոնեությունը համաշխարհային կրոն է, ապա այդ դեպքում այն պետք է կատարեին այլ Եկեղեցիներ ևս: Մյուս կողմից, եթե Անդաստանն իրոք նախաքրիստոնեական ժամանակներից է մեզ հասել, ապա մենք չենք կարող ասել, թե ինչպիսի արարողակարգ է ունեցել, ինչ առարկաներ են գործածել, և ովքեր են մասնակցել նախքան հայոց Դարձը:

Այսպիսով՝ Կաթողիկե Եկեղեցին համախմբում ու կարգավորում է աշխարհն իր ամբողջության մեջ՝ ուղղաձիգ և հորիզոնական տեղորոշիչ կետերով՝ արտացոլելով երկնային նախատիպը: Եկեղեցու մեջ կամ դրա շուրջ Անդաստան կատարելով՝ ամեն անգամ վերստին վերահաստատվում է հայկական քրիստոնեական աշխարհի նախօրինակը՝ հայ ժողովրդին համախմբելով Եկեղեցու և քրիստոնեական հավատքի շուրջ: Օրհնվում են աշխարհի ծագերը, որոնց համապատասխանում են՝ արևելք՝ Հայոց հայրապետություն – ոգեղենություն, արևմուտք՝ Հայոց թագավորություն – պետականություն, հարավ՝ երկիր – բերք, և հյուսիս՝ բնակավայրեր և ժողովուրդ: Անդաստանի ծեսով վերահաստատվում էր փափագելի հայրենիքի նախատիպը՝ խարսխված չորս հիմնասյուների վրա՝ հավատ, պետականություն, բարօրություն և միասնականություն: Անդաստան էր կատարվում նաև տիեզերքի խաթարման դեպքում՝ երաշտ, կարկուտ, սառնամանիք և այլն՝ Անդաստանի օգնությամբ վերանորոգելով տիեզերքը: Հաշվի առնելով «անդաստան» բառի իմաստն ու հատկապես կատարման ժամանակաշրջանը՝ հնարավոր է, որ այն մեզ է հասել նախաքրիստոնեական ժամանակներից և բուն հայկական, հեթանոսության ժառանգություն է՝ քրիստոնեական վերաիմաստավորմամբ:

Անուշավան եպիսկոպոս ԺԱՄԿՈՉՅԱՆ,
պատմ. գիտ. դոկտոր,
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան

Կարեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Դանիել Վարուժան

Անդաստան

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղություն թող ըլլա...
Ո՜չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.
Ու երբ հնչե կոչնակն ամեն
գյուղակի՝
Օրհներգություն թող ըլլա:

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիություն թող ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա
արածին՝
Ծիլ ու ծաղիկ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատություն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն աղունններուն
երբ բացվի՝
Բերկրություն թող ըլլա:

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլա...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը
բարի՝
Սիրերգություն թող ըլլա:

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Ժամանակակից հայ մարդու ազգային ողբերգությունը

ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ — 60



Խաչիկ Մանուկյանը ժամանակակից հայ պոեզիայի առաջատար դեմքերից է, որն իր ստեղծագործությամբ կամրջում է 20-րդ դարը 21-րդ դարին՝ դառնալով արդի պոետական մտածողության մայրուղի, որտեղ հատվում են Չարենց–Սևակ–Շիրազ գրական ճանապարհները, դառնում գեղարվեստական միանգամայն նոր որակ ու նոր մտածողություն: Մանուկյանի պոեզիան ժամանակակից հայ ինքնության պոետական վկայագիրն է համաշխարհային գրական հարթակում, Հայաստանի պատմահոգեբանական ինքնապատկերը աշխարհաքաղաքական շարժընթացների արձանագրումների համապատկերում: Խաչիկ Մանուկյանը գալիս է մեր ազգային արմատներից և համաշխարհային որոնումների՝ մեր օրերի խելահեղ մրցավազքում աշխարհաքաղաքացիության միտումներ դրսևորող պոեզիայի տեղ՝ բերում ինքնություն ունեցող պոեզիա, համանման-համընդհանրական մտածողության ու ոճի փոխարեն՝ անհատական մտածողություն ու ոճ: Ժամանակակից պոեզիայի որոնումների վայրիվերումների մեջ Մանուկյանի պոեզիան բարձրանում է որպես ընթացք նշանավորող առաջնորդ պոեզիա՝ իր առանձնահատուկ դիմագծով, պատմամշակութային արժեքով ու կշռով: Հայ հավաքական Բանի պոետական բացառիկ ժայթքումներով Խաչիկ Մանուկյանը նշանավորվում է որպես գրական երևույթ, դառնում մեր ազգային հոգևոր հարստություններից մեկը՝ թե՛ իր գրական հունձքով, թե՛ Վաչագան սերունդով: Նա գալիս է ապացուցելու հայ հանճարի հունդի անսպառ շարունակականությունը, հայ հոգևոր միջնաբերդի ճանապարհի կենսունակությունը, Ոգու և Գոյի մեկտեղության լինելությունը:

Այո՛, Խաչիկ Մանուկյանի պոեզիան անհատական-ազգային դեմք ու դիմագիծ ունեցող պոեզիա է, Ուժի և Ոգու համակշիռ պոեզիա: Այն գոյամարտի ու հերոսացումի, ցավի ու ցասումի, վճռականության ու կամքի բանաստեղծական բարձրագույն ինքնարտահայտում է, հայ ազգային պոեզիայի արիականությունը հաստատագրող ու վերահռչակող պոեզիա: Մանուկյանի պոետական խոսքի զորությունը սերում է հայրենի հողից և թափ առնում ճակատագրի հարվածներից, խոսքի ոգեղեն և հողեղեն տարերքները ներդաշնակված են իրար՝ որպես անտրոհելի ու անբաժանելի միագոյություն:

Պարտվողական-զինաթափության հոգեվիճակների տեղ՝ Խաչիկ Մանուկյանի պոեզիան բերում է դիմադրողականության և արժանապատվության հոգեբանություն, անգլուխ-անղեկության փոխարեն՝ խոհեմ սթափություն, չնչին մորթապաշտության դեմ՝ մեծահոգի ինքնայրում: Դիմադարձելով եզան հոգեբանությամբ հայրենիք վերակերտելու քաղաքական ընթացքի դեմ՝ բանաստեղծն ահազանգում է՝ իմ հայրենիքը եզ չէ.

Որ ճիպտեն, բեռնած սայլը քաշի.
Հիպնոսացրել ու թոզ են փչել,
Որ իրեն կարծի պրծած հաշիվ:
Որ մոլորակի աջ պռնկից
Հրեշտակաբար թևի գնա,
Որ տաք հուշերով չհիշեն ինձ,
Որ պապերիցս բան չմնա:
Որ ավերակեն, սարքեն մոխիր
Աստծո արարմունքն այս կատարյալ,
Եվ անասնացած մի մեծ նախիր
Արածի ծաղկած դաշտի վրա....

Աշխարհաքաղաքական ու ներքաղաքական դավադիր գործընթացներին դեմ հանդիման ծառացող անհատական-հավաքական ցասումի ու դառնության հոգեբանական այս պահին հաջորդում է բանաստեղծի երդումի խոսքը՝ որպես անդրժելի ուխտ՝ տրված գոյության մաքառումների ճանապարհին ուժասպառվող հայրենի երկրին. *«Քեզ չեմ շրջանցի, քեզ ապրելու եմ, // Իմ հրաշք երկիր, իմ խինդ ու ցավ, // Քեզանից հեռու ինձ ատելու եմ // Բոլոր պահերի մեջ ուրացյալ»*: Սա փորձությունների մատնված հայրենի երկրին ուղղված սիրո ու կարեկցանքի ներքին խոսք է, ուր համատեղվում են խինդն ու ցավը, հավատարմության գիտակցական մի աստիճան, երբ լքումը դառնալու է ուրացում, իսկ հեռացումը՝ հոգևոր-ֆիզիկական մահ, քանի որ հայրենիքն ու բանաստեղծը նաև մեկ միասնական գոյություն են, հոգևոր-օրգանական երկվորյակներ. *«Քեզանից հեռու ես մեռնելու եմ՝ // Ինքս իմ էության մեջ բացակա...»*:

Հայրենիքի ու ժամանակի, պատերազմի ու քաղաքականության պատկերները Խաչիկ Մանուկյանի պոեզիայում միախառնվում, դառնում են մեկ դիմապատկեր, ուր ցայտուն կերպով արտացոլվում են իրար հաջորդող դարակազմիկ ապրումներ, որոնց շրջապտույտների առանցքում մշտապես ինքն է՝ բանաստեղծը՝ որպես այդ ամենի գլխավոր վկա.

Սերը վերջացավ, ատելություն է,
Խորշանքի թույնն է բյուր սրտերում,
Թանձրանում է մահվան սև գույնը,
Եվ քաոսն է այս ափին տիրում:
Անդունդներն ի վար հոգու անկում է,
Շուրջս ցփնում են ողբ ու հառաչ,
Եվ կործանում են աստծո այս տունը,
Ցնդող մարդկության աչքի առաջ...

Աշխարհաքաղաքական վայրագ ընթացքի, ներքաղաքական ուրացումների ու դավադրությունների հոգեբանական պատկերները, աներևույթ կամ երևութացող գլխավոր մեղավորների կերպարները Մանուկյանի պոեզիայում փոխկապակցվում ու փոխլրացնում են իրար՝ ամբողջացնելով դարի ու հայրենիքի ողբերգությունը: Հետզհետե ուժգնացող ապրումներին համաչափ՝ սաստկանում են բանաստեղծական չափն ու պատկերավորման ներքին եղանակները, նշմարվում են նաև ահագնացման միտում ունեցող *մ*-երի և *կ*-երի բաղաձայնույթները՝ որպես մահվան ու արյան ուրվապատկերներ: Այսպես իմաստազրկվում է աստվածային արարչագործությունը, և կյանքի հրաշքը «անմխիթար կորուստներից» դառնում է «ցավագար գալարում» ու արնաքամ հոգեվարք.

Դժոխքի կաթսան ջրով եռում է,
Շուրջը պարում է չարքի արքան...
Ինքնահրկիզված սերը մեռնում է,
Թվում է՝ արդեն վերջին անգամ,
Եվ իմաստազուրկ արարում է
Դառնում հրաշքը տերունական:
Ցավագարների գալարում է
Կորուստների մեջ անմխիթար,
Կաթկթում է մեր թանկ արյունը
Կյանքի աչքերին մահով մթար...

Խաչիկ Մանուկյանի պոեզիան ժամանակակից հայ անհատի ազգային ողբերգության համապարփակ խտացումն է, որ մերթ պոռթկում է որպես ոգեղեն անզիջում դիմադրություն, մերթ հնչում իբրև զորության խոսք՝ խավարի տիրակալության դեմ՝ հանուն լույսի, մերթ ինքնարտահայտվում գոյամարտում ունեցած անձնական-ազգային կուրուստների անկշռելի ցավով.

Անհեթեթ, փնթի ժամանակներ են,
Հոգին արյունող նյութի ճանկերում,
Խավարը լույսին չի կարող ներել,
Անթափանց մութն է խավարին գերում:
Կարող ես չքվել, թե չես համբերում
Չարի դեմ ձգվող բարիկադներին,
Նայիր՝ ինչպես են արևներ բերում
Հրեշտակների լուսե թևերին....

Մանուկյանի բանաստեղծությունների մեջ գրեթե մշտապես առկա է կորստի՝ արժանապատվորեն զսպված տեսանելի կամ զգալի ցավը, որ մերթընդմերթ արտաժայթքում ու անմիջապես ներմղվում է՝ փոխակերպվելով հոգեբանական հարակից ապրումների: Այդպես, որ կորստի վիշտը հանկարծ ինքնության ամրոցի թուլություն չդառնա, որ ինքնազատագրում տեղի չունենա, ու ցավի կշիռը չթեթևանա: Իսկ արդյունքը ինքնազսպումից ու ինքնախտացումից ի հայտ եկած այս պայթունավտանգ գոյավիճակն է. *«Թե մնամ, այս գունդը կպայթի, // Տեղ չկա իմ հոգս ու ցավերին, // Բայց դեռ չեմ պատրաստվում դառնալ դի, // Պտտվիր, կարուսել, պտտվիր...»*: Կարուսելի տերյանական պատկերն ի մի է բերում անցյալը, ներկան ու ապագան՝ անհատ–ժողովուրդ–ճանապարհ ներքին խոհաքննությամբ: Անհատական ճակատագիրն ընկալվում է որպես ժողովրդի պատմության մշտանորոգ մի մաս.

Բախտիս հանգույցը հեռվում էին կապել,
Ձեռքերս չեն հասնում, որ քանդեմ,
Սրտամաշ վշտեր ու հոգսերի բեռ շալակիս՝
Հոգնել եմ ես արդեն:
Ի՜նչ հեշտ էր սկիզբը,
Հաղթեցի ես քեզ, Բել,
Արևոտ մի երկիր շահեցի....

Մանուկյանի բանաստեղծական պատկերներում գերիշխում են հոգեբանական մակընթացությունները, ինքնակեղեք ցավի ու ողջակիզող ցասումի հոգեվիճակները: Թվում է՝ դրանք ներքին բնածին տարերային ժայթքումներ են պոեզիայի աշխարհում: Մտքի շիկացումը, խոսքի հրեղեն տարերքը, պատկերների հիպերբոլիկ ընդգրկումներն ու ոգեղեն հզոր շունչը Մանուկյանի պոետական դիմագծի ամենաբնորոշ հատկանիշներն են, նրա պատմաքաղաքական ու պատմահոգեբանական պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները:

Խաչիկ Մանուկյանի պոեզիայում կենտրոնական երևույթներ են դառնում պատմաքաղաքական ու պատմահոգեբանական մթնոլորտ ձևավորող մի քանի իրողություններ՝ հայրենիքի կործանման տագնապը, դավն ու դավաճանությունը, ազգային սերուցքի զոհաբերման ողբերգությունը: Կործանվող երկրի ողբերգությունը՝ ցավի ու ցասումի բռնկումներով, անմնացորդ փոխանցվում է նրա բանաստեղծ որդուն: Գրիչը դառնում է զենք, խոսքը՝ հրեղեն պայքարի ու վրիժառության անզիջում տարերք: Բանաստեղծը կանգնած է պատմական օրվա կենտրոնում՝ պայքարի միջից հայացքը հառած դեպի ապագա: Խոսքի ոգեղեն պայքարի երկու բևեռներ են դառնում ներքին խոր դրամատիզմն ու արտակարգ ուժը, իսկ ավարտը՝ դիմագրավելու տոկունությունն ու հաղթանակի սպասումը.

Ինձ ռազմանվագ երգ է հարկավոր
Ու հողմաշառաչ հայոց այրուձի:
Պատի՛ժ է՝ կորած երկիր ունենալ,
Ոճի՛ր է՝ լինել հեգ հուղարկավոր....

Հոգեբանական ապրումների տեղապտույտը դառնում է մշտնջենական շրջապտույտ, հույզերի մրրկահույզ ընթացքին ժամանակ առ ժամանակ հաջորդում են նաև կարճատև տեղատվություններ, երբ առաջին գիծ է մղվում ոչ թե զգացմունքային շիկացումը, այլ հետադարձ հայացքով իմաստնացած խոհը.

Լույսով ողողված տոն էի կարծել՝
Սիրո՛, կարոտի՛, ընծայումների....
Տե՛ր, նայի՛ր՝ ինչ է երկիրդ դարձել,
Դու իմ փոխարեն այստեղ կապրեի՞ր...

Հաջորդում է ցավի գերագույն բևեռացումն ամբողջացնող ողջակիզման կամքը՝ որպես միակ ինքնափրկություն: Դա այն պահն է, երբ ամենաթանկ կորուստները կյանքի տոնը վերածում են իրական դժոխքի. *«Կյանքը վերջացավ, // Իսկ մահը չկա, // Չգիտեմ՝ հիմա ինչ եմ անելու– // Թևերս բացեմ // Ու դառնամ խաչքար– // Երկնքի վրա....»*: Հոգեբանական մակընթացությունները միանգամայն ներդաշնակվում են պատկերային բռնկումներին, որոնց առանցքում հայտնվում են գերակա դիրք ունեցող և տրամադրություն որոշակիացնող առանձին բառեր.

Ես վաղուց խնդասիրտ չեմ երգել
Իմ սրտի շրխկան բառերով,
Հետևում՝ ցավեր են ու վերքեր,
Առջևում՝ հայացքներ են խռով....

Մահվան ու անկումի մթնոլորտում բանաստեղծի գերագույն կամքը ազգային ուրացողների հեռացումն է: Ուրեմն՝ ազգային ուրացությունից է սկսվում կործանման աղետը, և փրկության դուռը դավաճանության մահն է: Բանաստեղծի կամքը հնչում է որպես ժամանակակից աղոթք, որպես նորօրյա շարական.

Դիվապետին տար քամիների հետ,
Ազգուրացների ընթացքը բեկիր....
Ամոքում բեր մեր արնածոր վերքին,
Մահաբերներին հեռացրու հավետ:
Մնա՛, մի՛ ցնդիր, դրախտի երկիր....

Համաբնույթ բանաստեղծական պատկերներ շատ կան Մանուկյանի պոեզիայում, որոնք ներքին կապով ամբողջացնում են ողբերգության համապարփակ պատկերը: Ահա բնորոշ մի բանաստեղծություն՝ «Խարանը»՝ գրված ատելության և անհանդուրժողականության թանձր մուժով: Որպես նորօրյա Աստծո քարտուղար՝ բանաստեղծը խարանում է իշխանավորների գործած մեղքերը, որոնք չունեն թողություն տալու և զղջմամբ ու ապաշխարությամբ ներում հայցելու վերջին հնարավորություն.

Ծարավ վամպիրի պես ժանիքներդ խրած
Չքնաղ պարանոցին ծաղկուն հայրենիքիս,
Ժողովրդի կյանքը կայքին գրավ դրած,
Փայլուն փաթաթաններ՝ ցավոտ վերքիս,
Իմ արցունքն ու վիշտն եք պարզում ինձ տոն որպես–
Ես՝ հայ բանաստեղծս, չեմ ներում ձեզ....
Փուչ կրքերին տրված ձեր թուլամորթ վարքին, ➥ էջ 7

Ժամանակակից հայ մարդու ազգային ողբերգությունը

↩ էջ 6

Ձեր ոսկեթույն կայքին, սին փառքին ձեր,
Պալատներին՝ գամված անարգանքի պատին,
Եվ անհագուրդ ոգուն ձեր խառնացեղ՝
Սև խարանն եմ գամում՝ դավաճանին որպես....

Մարդկային գերագույն մեղքը Մանուկյանի պոեզիայում ազգային դավաճանությունն է: Բանաստեղծի խոսքը հրահանգվում է որպես ահեղ դատավճիռ՝ հիմնավորված ազգային ողբերգություններով ու անվերադարձ կորուստներով: Ահավասիկ մի ուրիշ ստեղծագործություն, որ «Երկիրդ ի՞նչ արժե....» կրկնատողով բանաստեղծության տրամաբանական շարունակությունն է, ազգային ողբերգության նախավերջին արարը, որ միաժամանակ երևան է բերում երեկվա ու ներկա պահի պատմաքաղաքական կապը.

Ճեմասրահում՝ օսլայված բառեր
Եվ փողկապավոր դեմքեր սիրասուն—
Հայրենիքներ են գնել-վաճառել
Ճարտասանները խոսքահանդեսում—
Թփուտների տակ՝ փսլինքի հեղեղ,
Լեռների վրա՝ զարմեր դյուցազուն,
Արանքում մահվան սերմեր են հեղել
Եվ դիակների հունձք են սպասում....

Հայրենիքի՝ այսօրվա ու երեկվա ճակատագրի ողբերգականությունը՝ բաղդատական ու գերադրական հատկանիշներով, տեսանելի է դառնում Մանուկյանի պոեզիայի ամբողջ ճանապարհին: Ահա մոտ անցյալում գրված «Նաիրյան էլեգիաներ»-ից հատկանշական մի քանի պատկեր, որ առարկայական են դարձնում պատմաքաղաքական ընթացքի շարունակականությունն ու ներքին կապը.

Էլ չունեմ հայրենիք անմեռ,
Ինքնիշխան, զորավոր, կարգին,
Ողջ կյանքս պանդոկին նվեր,
Եվ հոգիս՝ արյունոտ բագին:

Ահավասիկ նաիրյան մի այլ էլեգիա. *«Տղամարդու չեղած դառը արցունքներով.... // Անթիվ կորուստներից իմ պաշարված սիրով // Ուզում եմ քեզ հիմա ամուր գրկել ու լալ...»:* Կորստի հոգեբանական պատկերները Խաչիկ Մանուկյանի պոեզիայում, առանձնահատկություններով հանդերձ, միավորվում են ներքին կապով, ինչը հայրենիքի՝ ոչ միայն այսօրվա, այլև երեկվա ու վաղվա ողբերգությունն է.

Իմ հայրենիքն է ինձնից հեռանում,
Ես չեմ հեռանում իմ հայրենիքից,
Ոտքիս տակ հողն է դառնում անանուն,
Մարդիկ՝ անհաղորդ ու անկարեկից....
Հույս, հավատ ու սեր տանուլ տվեցի
Խեղկատակների տոնահանդեսում,
Էլ չեն սպասում իմ վերադարձին
Եվ հրաժեշտի խոսքեր են ասում:
Բայց ես ամուր եմ կանգնել իմ տեղում
Խորշակների դեմ անպարտ ու անբիծ....

Գերագույն մեղքին ու մեղավորներին դեմ հանդիման Մանուկյանի պոեզիայում բարձրանում են գերագույն առաքինությունն ու առաքինիները՝ սրբազնագույն ցավի ու հպարտության գաղափարակիր հերոսները, որոնցից մեկն էլ բանաստեղծի որդին է, որի կերպարը՝ որպես քնարական հերոս, երբեմն բարձրանում է տողերի խորքից՝ երևան բերելով բանաստեղծի խոր ողբերգությունը.

Կրակահերթ է,
Հրո շքերթ է,
Գայլը ոռնում է,
Փախչում է չուն,
Արյունն է ծորում,
Ցավո՛ւմ է վերքը,
Բայց նա բարձունքից
Չի՛ նահանջում:
Ետևում գյուղն է,
Իր սուրբ մատուռն է,
Ինքը սահմանն է
Հայրենիքի,
Հսկում է՝ որպես
Իր մեծ տան դուռը,
Ուր ամեն ոսոխ պիտի ծնկի՛....

Պատերազմի ողբերգահերոսական պատկերի մեջ՝ կենդանի ու չմիջնորդավորված, կերպավորվում է վեհության մարմնացում Հերոսը՝ վիրավոր, արնաքամ, բայց անսասան ու աննահանջ՝ դիրքը պահելիս մինչը վերջին շունչը: Խաչիկ Մանուկյանը վավերական պահի բացառիկ ճշգրտությամբ է վերակերտում գեղարվեստական պատկերը: Նրա կերտած բանաստեղծական պատկերները նկարագրական արվեստով, անմիջական շնչով, հոգեբանական խորքերով ասես կենդանի շարժանկար են՝ պահի մեջ տեսագրված, որքան իրական, նույնքան էլ ոգեղեն: Պատկերն այնքան առարկայական է ու տեսանելի, ասես աչքիդ առաջ է, ու զգում ես այն բոլոր նյարդերով: Ահավասիկ պատերազմական մի ուրիշ պատկեր.

Սուրո՛ւմ են,
Շաչո՛ւմ են,
Պայթո՛ւմ են արկերը,
Պարելով բերում են
Կրա՛կ ու մա՛հ.
Երկնքից կանչում է
Հրազարդ լապտերը,
Կարմրածոր պատկերներ
Կշաղի հիմա....

Սա ճակատամարտի գեղարվեստական անընստգյուտ մի պատկեր է՝ գոյամարտի հոգեբանական վերապրումի լարման գերագույն պահ: Ասես լսում ես պատերազմի շառաչը, հակառակ ճակատից սուրացող արկերի պայթյունը, որոնք, երկնքում ծիր կապելով, տեղում են իբրև մահաբեր անձրև, և շուրջբոլորը չարակամորեն վառվում է կարմիր գույներով ու պատկերներով: Պատկերակերտման արվեստը, բանաստեղծական չափը, խոսքի հրեղեն տարերքը, ամեն ինչ այնքան ճշգրտորեն փոխլրացնում են իրար, ասես անմիջականորեն տեսնում ես հրածուփ պատկերը, ներկա ես գործողությանը, հիանում ես մարտնչող քաջերով, որոնց դեմ նույնիսկ մահն է անզոր: Պատերազմի ահեղաշունչ պատկերները, հերոսացող քաջերը, ողբերգականն ու վեհը Մանուկյանի պոեզիայում հառնում են ամբողջ հասակով, պատկերանում ողջ տարողությամբ: Բանաստեղծական պատկերներին առանձին գրավչություն են հաղորդում ոչ միայն պատկերակերտման շուքը, խոսքի թափը, այլև բաղաձայնույթներով տարահնչող ներքին երաժշտականությունը: Մեկ *պ*-երի բաղաձայնույթը՝ որպես պայթյունի ձայնապատկեր, մեկ *կ*-երի բաղաձայնույթը՝ որպես կարմրի կամ կրակի գունապատկեր, մեկ *մ*-երի բաղաձայնույթը՝ որպես մահվան տեսլապատկեր, ուժգնացնում են բանաստեղծության թողած ազդեցությունը, ստեղծում զինվորական խրոխտ համանվագի տպավորություն:

Պատերազմի հոգեբանական հետագծերը տարբեր են Մանուկյանի պոեզիայում. կողք կողքի են հերոսականն ու ողբերգականը, վիշտն ու հպարտությունը, հիացմունքն ու ցավը: Տարբեր է նաև գեղարվեստական ոճը: Պատկերը և ոգին, տրամադրությունն ու եղանակը, հոգեվիճակն ու ինքնարտահայտման ձևը միշտ ներդաշնակ են իրար: Բանաստեղծը կանգնած է ահեղ պայքարի կենտրոնում, որովհետև հայրենիքի գոյամարտից հեռու մնալը համահավասար է ինքնաոչնչացման, նաև որովհետև այդ գոյամարտին նա տվել է իր կյանքից առավելագույնը, ու հիմա այլևս հետ պահող չկա.

Հիմա, երբ որդիդ սահմանին է,
Հիմա, երբ ռումբեր են պայթում,
Երբ ամեն զինվորի վերքից
Նաև քո արյունն է կաթում—
Չես կարող երազին կուլ գնալ,
Չես կարող չմնալ արթուն—
Նրա հետ կռվել աննահանջ,
Նրա հետ հաղթել մարտում:

Մանուկյանի գոյամաքառումի պոեզիայում գլուխգործոցային բանաստեղծություններ շատ կան, բայց առանձնանում է նաև մեկը՝ որպես իր տեսակի մեջ երգ երգոց: «Գոյամարտ» բանաստեղծությունն է դա՝ երեկվա, այսօրվա ու վաղվա բոլոր գոյամարտերի մշտնջենական երգ երգոցը.

Բարձունքը մերն է, տղերքը՝ չկան,
Տղերքն ավելի բարձրում մնացին,
Դիպան աստղերին, աստղերը հանգան,
Ու մրմուռ քսվեց մեր ցամաք հացին:
Շահեցի՞ր, երկիր, թե՞ կորցրեցիր—
Բարձունքը մերն է, տղերքը... չկան:

Հոգեբանական ինքնաքննության մտասևեռումին՝ *«Ձեր կյանքի հաշվին ո՞նց եմ ապրելու....»*, հաջորդում են հայրենիքին ուղղված այսպիսի խոհեր. *«Հողդ չեմ տեսել, ցավդ չեմ կիսել, // Չեմ դարձել զոհ քո հաղթության համար....»:* Սա այն է, որ կոչվում է հայրենիքի ու նրա բանաստեղծ որդու միագոյություն կամ ես-ի և դու-ի համամիություն. *«Ու որ իմն ես դու, ու որ քոնն եմ ես....»:* Սա այն է, որ կոչվում է պոեզիայի մարգարեություն. *«Ու իմ արյունը՝ քեզ սպեղանի....»*: Պտտվում է կյանքի կարուսելը. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց....»: Այո՛, ոչ միայն իր արյունը՝ իբրև սպեղանի, այլև իր արյան արյունը, ոչ միայն իր կյանքը, այլև իր կյանքի կյանքը.

Քեզ հիմա նայում եմ՝
Իմ Որդին ես,
Արցախ,
Հաղթական իր պատկերն է
Դեմքիդ....

Խաչիկ Մանուկյանի պոեզիան մեր ազգային վերջին կորուստների ու ողբերգությունների հոգևոր պատմությունն է, ազգային կործանված երազանքների ու խորտակված հույսերի բանաստեղծական մատյանը, որը, սակայն, երբեք ողբագիրք չի դառնում: Այն պայքարի ու հարության, հաղթանակի ու գոյատևության բանարվեստ է՝ ստեղծված հզոր տաղանդով և հրեղեն ոգով:

Նարինե Հովհաննիսյան,
բ. գ. թ., դոցենտ

Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի անտիպ նամակներից

Մեծայարգ տիար Վահե Հայկ

15 Սեպտեմբեր, 1971 թ.
Ֆրէզնօ

Սիրելի Պրն. Հայկ,

Շնորհակալութեամբ ստացանք ազնուաբար մեզի նուիրած Ձեր «Հայրենի ծխան» գիրքը: Մեր ծանր զբաղումներուն մէջ անգամ հաճոյքով կարդացինք հոն զետեղուած պատմուածքները: Հայրենի երկրի եւ արտաշխարհի մերազն ժողովուրդի յատուկ պատկերներ, ապրումներ եւ դրուագներ, ոմանք յոյժ օրինակելի եւ ուրիշներ ալ խոցելի կողմերով, ինչպէս միշտ, այս անգամ եւս յաջողած էք պատմել սահուն ոճով մը, գրականութեան ճաշակը տալով Ձեր ընթերցողներուն:

Խորապէս կը գնահատենք, որ Ձեր առօրեայ զբաղումներուն պատճառած տաղտուկն ու յոգնութիւնը քաջաբար զանցառնելով, աւելի քան յիսուն տարուան շրջանով ստեղծագործական աշխատանք կատարած էք լեցուն եռանդով ու բարձր նուիրումով: Բացի հրապարակագրական այն էջերէն, որոնք կը զետեղէք հայ մամուլին մէջ, դուք կարողացած էք հայ մատենագրութեան բարիքին համար, Ձեր անձնական միջոցներով հրատարակել հինգ հատոր «Հայրենի ծխան», որուն համար արժանացած էք քննադատներու եւ ընթերցողներու խոր գնահատութեան:

Մեր ջերմագին մաղթանքն է, որ դուք մնաք քաջառողջ եւ կենսունակ, շարունակելու համար մեր գրականութեան հաշւոյն Ձեր անխոնջ գործունէութիւնը գալիք տասնամեակներուն եւս:

Կ'աղօթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ Ձեր, Ձեր ազնիւ տիկնոջ եւ ընտանիքի բոլոր անդամներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ
Թորգոմ արքեպիսկոպոս
Առաջնորդ

Մեծայարգ տիար
Արամ Հայկազ

9 Նոյեմբեր, 1972 թ.
Նիւ Եորք
Ռիկո փարք.

Սիրելի Պրն. Ա. Հայկազ,

Շնորհակալութեամբ ստացանք մեզի նուիրած Ձեր «Կարօտ» գիրքը: Խորապէս կը գնահատենք Հայ գրականութեան բերած Ձեր առատ հունձքը: Հաճոյքով կարդացինք Ձեր այս ստուար հատորին մէջ մէկտեղուած կարգ մը պատմուածքներն ու նկարագրութիւնները: Ձեր պատմելու եղանակը եւ ոճին պարզութիւնը միշտ ալ հաճելի կ'ընեն ընթերցումը Ձեր գործերուն:

Ուրախ եղանք իմանալով որ գալ կիրակի, նոյեմբեր 12-ին, Նիւ Եորքի մէջ պիտի տօնախմբուի Ձեր գրական գործունէութեան յիսնամեակը: Ջերմապէս կը շնորհաւորենք Ձեզ, Ձեր անձին ու գործին նուիրուած այս հանդիսութեան առիթով:

Կը մաղթենք որ մնաք միշտ առողջ հոգիով եւ մարմինով, եւ կարենաք շարունակել Ձեր ստեղծագործական աշխատանքները:

Սիրոյ ողջունիւ
Թորգոմ արքեպիսկոպոս
Առաջնորդ

Մեծայարգ տիար Անդրանիկ
Անդրէասեան
Խմբագիր՝ «Նոր օր» եռօրեայի

4 փետրուար, 1976 թ.
Լոս Անճելըս

Սիրելի Անդրանիկ,

Լրագիրներուն մէջ ուրախութեամբ կարդացինք որ Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսը Ձեր ծննդեան 65-ամեակին եւ գրական-հասարակական գործունէութեան 45-ամեակին առթիւ պարգեւատրած է Ձեզ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա. Կարգի Շքանշանով:

Արժանաւորին ընծայուած պատիւ մըն է այս մէկը, որուն տիրացաք գրական Ձեր բարձր տաղանդին, ազգային-հասարակական Ձեր առողջ գործունէութեան, Մայր Հայրենիքի հանդէպ Ձեր տածած անսակարկ հաւատքին ու նուիրումին եւ Ձեր հայկական ազնիւ նկարագրին շնորհիւ:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի Շքանշանով Ձեր պարգեւատրման այս ուրախ առթիւ սրտանց կը շնորհաւորենք Ձեզ եւ կ'աղօթենք որ մեր Տէրը Ձեր խօսքն ու գրիչը միշտ դալար պահէ եւ Ձեզի ու Ձեր հարազատներուն պարգեւէ հոգիի ու մարմնի առաւել առողջութիւն:

Սիրոյ ողջունիւ
Թորգոմ արքեպիսկոպոս
Առաջնորդ

Նամակները տրամադրեց
Սիլվա Սուքիասյանը

Հայ Եկեղեցու պատմական առաքելությունը ազգային ինքնության պահպանման գործում

«Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս...»
Վահան Թեքեյեան

Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունն սկսվեց նրա կազմավորման պահից, սակայն առավել մեծ ու կարևոր դարձավ, երբ հայոց պետականությունն ապրում էր իր անկման օրերը:

Տակավին 5-րդ դարում, երբ Արշակունյաց թագավորությունն իր մայրամուտն էր ապրում, և գալիք արհավիրքերին դիմակայելու համար հայությանն անհրաժեշտ էր միավորող գործոն, իսկ այդ դերը կատարելու համար Հայ Եկեղեցին դեռ պետք է քրիստոնեությունն արմատավորեր ժողովրդի մեջ, քանի որ օտարալեզու դպրության պայմաններում նրա լայն խավերն ի զորու չէին ընկալելու և հասկանալու քրիստոնեական գաղափարախոսությունը, ժամանակի ամենակիրթ հոգևորականներից մեկը՝ Մեսրոպ Մաշտոցը, Ամենայն Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի և Հայոց արքա Վռամշապուհ Արշակունու հովանավորությամբ ձեռնամուխ եղավ հայոց գրերի ստեղծմանը, որին պետք է հաջորդեին Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը, ինքնուրույն գրականության զարգացումը և, իհարկե, առաջին դպրոցների հիմնումն Ամարասում, Վաղարշապատում և այլուր: Ոսկեդարում ստեղծված նյութական և հոգևոր զորեղ մշակույթն էլ քաղաքական անբարեհաջող տվյալ պայմաններում նպաստեց համազգային կյանքի կայունացմանը և արտաքին ճնշմանը դիմագրավելուն: Իրադարձությունների բերումով հայկական թագավորության անկումը հնարավոր չեղավ կանխել: 428 թ. հայկական թագավորությունն ընկավ, և այդ պայմաններում Հայոց Եկեղեցու պատասխանատվությունն ավելի մեծացավ, քանզի այն աստիճանաբար պետք է դառնար հայության թե՛ հոգևոր, թե՛ քաղաքական առաջնորդը:

Հայոց Եկեղեցին իր մարտական մկրտությունն ստացավ 451 թվականին Ավարայրի դաշտում՝ ազգային ինքնության համար մղվող պատերազմում, երբ, ինչպես վկայում է Եղիշեն, հայոց նախարարների ու ժողովրդի կողքին էին նաև «....սուրբ Հովսեփը, սուրբ Ղևոնդ երեցը և բազմաթիվ այլ քահանաներ և էլ ավելի բազմաթիվ (հոգևոր) պաշտոնյաներ: Որովհետև նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի գալ նրանց հետ, քանի որ ո՛չ մարմնական էին համարում այն կռիվը, այլ հոգևոր առաքինության կռիվ, ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել»: Եվ հայոց ինքնության համար հոգևոր առաջնորդությամբ մղված առաջին ճակատամարտը հայ ժողովուրդը շահեց, ճակատամարտ, որ միշտ ոգեշնչում ու հոգևոր վահան էր դառնում հայությանը հետագա մեկ ու կես հազարամյակում՝ բոլոր աղետների ժամանակ:

Հայ Եկեղեցու նախաձեռնությամբ արձանագրվեց նաև հայոց թագավորության վերականգնում՝ Բագրատունիների գահակալմամբ: Այդ շրջանում Հայոց Եկեղեցին Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսի առաջնորդությամբ նախ դիվանագիտական ճկուն հարաբերությունների շնորհիվ կարողացավ արաբական գերությունից ազատել բազմաթիվ հայ իշխանների, ապա գործուն մասնակցություն ունեցավ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին, 862 թ. Շիրակավանի ժողովում մերժեց Կ. Պոլսի պատրիարք Փոտի՝ քաղկեդոնականություն ընդունելու առաջարկը՝ պաշտպանելով Հայոց Եկեղեցու դավանաբանական սկզբունքները և կանխելով Բյուզանդական կայսրության մեջ ապրող հայերին քաղկեդոնական դավանանքի պարտադրումը:

Հայոց Եկեղեցին գգալի դեր խաղաց սպարապետ Աշոտ Բագրատունուն Հայոց իշխանաց իշխան, ապա նաև 869 թ. հայ իշխանների համաժողովում նրան Հայոց թագավոր ճանաչելու գործում (պաշտոնապես պետք է թագադրվեր ավելի ուշ՝ 885 թ.՝ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի ձեռամբ): Հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Զագեցին նպաստեց նաև հայ իշխանների միաբանությանը, խրախուսեց շինարարական աշխատանքները:

Բագրատունիների թագավորության շրջանում և դրանից հետո էլ հայ կրթամշակութային կյանքի զարգացման գործում Հայոց Եկեղեցին շարունակեց ունենալ իր բացառիկ դերը. Անիի, Արգինայի, Կարսի, Հաղպատի, Սանահինի, Կեչառիսի, Այրիվանքի, Նարեկավանքի, Մշո Ս. Կարապետի և երկրի այլ դպրոցներում դասավանդում էին ժամանակի կիրթ հոգևորականները: Անիի՝ Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք հռչակվելուց հետո սկսվեց Հայ Եկեղեցու և հայկական մշակույթի զարգացման մի նոր շրջան. հիմնվեցին դպրոցներ, մատենադարաններ, վանքերին կից բացվեցին գրչության և մանրանկարչության կենտրոններ, կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ: 1280 թվականից գործում էր Գլաձորի համալսարանը, իսկ ավելի ուշ նրա ավանդույթները շարունակեց Տաթևի համալսարանը:

Արաբներին հաջորդեցին սելջուկ-թուրքերն ու թաթար-մոնղոլները, համարյա առանց լուրջ դիմադրության գրավեցին Հայաստանը, ստեղծված անպատմելի ծանր պայմաններում դարձյալ Հայոց Եկեղեցու ուսերին ծանրացավ հայության քաղաքական առաջնորդության գործը: Հենց Հայոց Եկեղեցին էր, որ պետք է սկզբնավորեր ու առաջնորդեր հայ ազատագրական պայքարը, որի բարձրաստիճան սպասավորներից շատերն ազնվականական ընտանիքների շառավիղների սքեմավոր ներկայացուցիչներ էին:

Ազգային ինքնության պահպանումը միայն կրոնական ու մշակութային առանձնահատկությունների պահպանումը չէր, այլ նաև հայրենիքում ազգային պետության ձևավորումը, և այս պարզ ճշմարտության գիտակցումով էր, որ Հայոց Եկեղեցին, հոգևոր-մշակութային արժեքների պահպանությունից զատ, քոչվորական տիրապետության ավերիչ դարաշրջաններում շարունակում էր փայփայել Հայոց պետականության վերականգնման գաղափարը: Այդ շրջանում ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ծավալման և տարածման գործում նշանակալից դեր ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Ե Սալմաստեցին, Միքայել Ա Սեբաստացին, Հակոբ Դ Ջուղայեցին:

Ազգային ինքնության պահպանման և այս անգամ պարսկական տիրապետությունից Հայաստանի ազատագրման գործում Հայոց Եկեղեցին իր կարևոր գործունեությունը շարունակեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսի առաջնորդությամբ: Ազգային ինքնության պահպանման, Հայաստանի արևելյան հատվածի ազատագրման, հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի առաջնորդության գործում Հայ Եկեղեցու առաքելությունն առանձնահատուկ կերպով դրսևորվեց հատկապես Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի և նրա հաջորդների օրոք: Ներսես Աշտարակեցին մեծ դեր խաղաց ազգային ինքնության պահպանման գործում՝ 1815 թ. հիմնելով ժամանակի լավագույն դպրոցներից մեկը՝ Ներսիսյան դպրոցը, որը մեկ դարի ընթացքում տվել է 2000 շրջանավարտ, որոնց մեծ մասը գրողներ, գիտնականներ, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ ու մանկավարժներ էին և կարևոր դեր ունեցան ազգային ինքնության պահպանման գործում: Ներսես Աշտարակեցուց սկիզբ առած հոգևոր-մշակութային նոր վերելքը շարունակվեց ողջ 19-րդ դարում. Էջմիածնում բացվեց Գևորգյան հոգևոր ճեմարանը, ստեղծվեցին գիտամշակութային, ուսումնակրթական բազմաթիվ կենտրոններ ու հաստատություններ Հայաստանում և գաղթավայրերում:

1915 թ.՝ Հայոց ցեղասպանության աղետալի օրերին, անչափելի մեծ կորուստներ կրեց նաև Հայոց Եկեղեցին և չնայած դրան՝ ապաստան ու ապավեն դարձավ ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայության համար: Իսկ 1918 թ. մայիսին, երբ դրված էր հայության լինել-չլինելու հարցը, Եկեղեցու դերը չսահմանափակվեց միայն Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի՝ Սուրբ Էջմիածինը չլքելով: Այդ օրերին Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում, մի նոր Ղևոնդ դարձած, Գարեգին եպս. Հովսեփյանը, Դանիել, Թադևոս և Եզնիկ վարդապետները, Տաճատ քահանան և շատ հոգևորականներ հայ զինվորի կողքին մարտնչում էին թշնամու դեմ:

Հայ Եկեղեցու, ապա նաև հայ ժողովրդի ազգային զարթոնքի մի նոր շրջան դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի աթոռակալության երկարատև շրջանը, երբ Հայոց Հայրապետը հնարավոր բոլոր միջոցներով նպաստեց ազգային ինքնագիտակցության բարձրացմանը և աջակցեց արցախյան շարժմանը՝ օրինելով հայկական երկու պետականությունների ծնունդը:

Վազգեն Վեհափառի գործի արժանապատիվ շարունակողները եղան նախ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանը, ապա՝ Ամենայն Հայոց Վեհափառ Գարեգին Բ Ներսիսյանը, որի քաջախորհուրդ առաջնորդությամբ էլ Հայոց Եկեղեցին շարունակում է իր առաքելությունը՝ ի բարօրություն Հայաստանի, Սփյուռքի և ի շահ Արցախի հիմնախնդրի արդար վերջնալուծման:

Պատմաքաղաքական հանգամանքների բերումով դարեր շարունակ ապրելով այլադավան միջավայրում կամ այլակրոն ժողովուրդների մեջ՝ մեր ժողովուրդն առավել ամուր կապվեց իր Եկեղեցուն, և կարելի է ասել, որ այդ կապը հրով ու սրով թրծված հոգևոր ամուր միություն է, որը բոլոր դարերում փորձել են խախտել թշնամիներն ու արտաքին խաղացող ուժերը՝ շարունակելով այդ քաղաքականությունը նաև մեր օրերում:

Այսպիսով՝ հաղթահարելով հազարամյակների մարտահրավերները՝ Հայ Եկեղեցին՝ հավատարիմ իր առաքելությանը, մշտապես եղել է ազգային ինքնության ու պետականության պաշտպանության դիրքերում՝ թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում: Ազգային ինքնության պահպանման իր պատմական առաքելությունն իրականացնելիս Հայ Եկեղեցին այսօր էլ կանգնած է դժվարին մարտահրավերների առաջ, որոնցից գլխավորը թշնամի պետությունների հովանավորությամբ հրապարակ իջած կրոնական ու աշխարհիկ տարատեսակ կազմակերպություններն են, որոնք ուղիղ սպառնալիք են և՛ մեր ազգային ինքնությանը, և՛ պետական անվտանգությանը: Իր պատմության ավելի քան 1700 տարվա ընթացքում Հայ Եկեղեցին միահյուսվել է հայ ժողովրդի հետ, դարձել նրա ինքնության անբաժան մասը, հետևաբար մեր ժողովուրդը և Եկեղեցին ճակատագրական այս օրերին պետք է մնան մի սիրտ և մի հոգի՝ գալիք մարտահրավերներին դիմակայելու համար:

Անի ՄԵԼՔՈՆՅԱՆ,
պատմության
և իրավագիտության
մագիստրոս

Հայտարարություն

Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայաստանի գրասենյակի նախաձեռնությամբ և ԵՊՀ պատմության և աստվածաբանության ֆակուլտետների համագործակցությամբ սեպտեմբերի 10-ին նախատեսվում է կազմակերպել համահայկական գիտաժողով՝ **«Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում»** խորագրով: Գիտաժողովը նպատակ ունի ևս մեկ անգամ կարևորել Հայոց Եկեղեցու դերն ու նշանակությունը:

Գիտաժողովին կարող են մասնակցել գիտնականներ Հայաստանից ու Սփյուռքից:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը սեպտեմբերի 20-ն է: Հայտերը ներկայացնել.

Համազգայինի Հայաստանի գրասենյակ, հասցե՝ Մաշտոցի 37, էլ. հասցե՝ Hayastan@hamazkayin.com,

ԵՊՀ պատմության և աստվածաբանության ֆակուլտետներ, հասցե՝ Աբովյան 52, էլ. հասցե՝ History@ysu.am:

Տեղեկատու հեռ.՝ 010 53 39 49

Աստվածաշունչ՝ գիրք գրոց

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ
ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՅԻՍԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այս մի իմաստութիւնն էլ գեսայ արեգակի ներքոյ, որ մեծ է թուում ինձ. փոքրիկ մի քաղաք կար եւ նրա մէջ՝ սակաւաթիւ մարդիկ. մեծապօր մի թագաւոր յարձակուեց դրա վրայ, պաշարեց այն եւ մեծամեծ պարիսպներ շինեց նրա դէմ: Իսկ այնտեղ աղքատ եւ իմաստուն մի մարդ կար, եւ նա իր իմաստութեամբ փրկեց քաղաքը, բայց յետոյ ոչ ոք չյիշեց այդ գնանկ մարդուն: Եւ ես ասացի. «Իմաստութիւնը լաւ է ուժից, մինչև իսկ եթէ աղքատի իմաստութիւնը արհամարհուած լինի, եւ չուզենան լսել նրա խօսքերը»: Իմաստունների մեղմ խօսքերն աւելի լաւ են լսուում, քան անպգամ իշխանների աղաղակը: Իմաստութիւնը լաւ է պատերազմի գործիքներից, բայց մէ՛կ մեղաւորը շատ կորուստներ կարող է կորստեան մատնել:

ԺՈՂՈՎՈՂ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստորագրված է տպագրության 15.03.2024 թ.
Տպաքանակը՝ 1265